

Մ.ԽԵՐԱԼՅԱՆ

ՄՈԿԱՅ ՄԻՐԶԱ

ՄԿՐՑԻՉ ԽԵՐԱՆՅԱՆ

891:99

h-48

ՍՏՈՒԳԱՄԵ Է 1961.թ.

ՄՈԿԱՑ ՄԻՐԱ

ՊՈԵՄ

2809

5540


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1960

М. Херанян

МОКАЦ МИРЗА

Гиз. Арм. ССР, Ереван, 1939

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԻ ԲԱԶՄԱԶԱՆ
ՄՇԱԿ,
ՀՆԶՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՊԵՏ
ԿՈՄԻՏԱՍԻ
ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ



ՆԱԽԵՐԳԱՆՔ

Առնու սարի ստորոտից գուլալ աղբյուր եր հոսում.
Դեպ այդ աղբյուրն եյի գնում յես այս գիշեր
յերագում:

Քայլում եյի ծարավակեզ, կտրելով ձոր ու կածամ,
Միշտ ունկնդիր այն աղբյուրի վնիտ կանչին
սիրաձայն:

Յերբ վոր հանկարծ—հրա՛ջք տեսիլ— Առնու սարի
կատարից
Մոտիկ ժայռին իջավ ներմակ ամալի ծվեն մի անբիծ.

Յեկ առնելով մի ալեգարդ ծերուկ հովվի կերպարանք՝
Յերգեց տխուր իր սրինգով մի սրտահույզ յեղանակ:

Ու քաջնեցի՛ն նրա յերգից ծաղիկները մեկ առ մեկ.
Կարոտակեզ ընկան բոլոր թիթեռները քևաբեկ:

Ամենուրեք շնչեց ասես հանկարծահաս մի աշուն,
Հալվեց կանաչ հագած հսկա Առնու սարը մշուշում:

Յերգե՛ց, յերգեց սրնգահար ծեր հովիվը և ահա՛

Յեղեյ ադում դարձած կրկին մերմակ ամպի մի
փուլա;

Սրտամուկիկ նրա յերգի հնչյունները հեռասույգ՝
Մեռնում էյին համատարած ամայության մեջ
անհույս...

Լո՛ւռ նստեցի աղբյուրի մոտ սիրտըս կոտրած ու
մոլոր,
Ամենուրեք մեռելային մի լռություն ահավոր:

Արևը հանց զարնըված հավք՝ գլորվում եր սարի
գիրկ,
Սիրտըս տխուր՝ կարդում էյի արյունատառ մի սև
գիրք...

Յերբ իրարու այնպե՛ս նման յերկու թռչուն սպիտակ
իջան մեկտեղ այն կարկաչուն աղբյուրը գով ու
հստակ.

Ուր լվացին լուսափետուր քեերն իրենց շողակաթ,
Ըմպելով կո՛ւշտ՝ կաթիլ-կաթիլ նրա անուշ ջուրը
կաթ.

Թռա՛ն կրկին, իրենց անբիծ քեիկներից ճյունաթույր
Ափ թողնելով դեռ նոր կթված կաթից մերմակ գույգ
փետուր:

...Ու զարթնեցի՛:— Գարնանային գեղածիծաղ
սուավո՛ւտ,

Արևարծիվն էր թռնել իմ գլխավերև բարձիս մոտ:

Լամպիս մոտիկ ընկած էյին յերկու բիքեռ բևակեզ,
Հանց յերազիս հավֆերը գույգ, ներմա՛կ-ներմա՛կ
նրանց պես:


— «Մոկաց-Միրզեն և Ալ-հաքուն—յերկու սրտեր
սիրահար,
Յերկու բռչուն՝ արնամշուշ մութ անցյալում
նետահար»...

Մի ձայն լսեց հեռվից-հեռու... Հույզիս հավֆը
վոսկեթև
Հախրեց հոգուս ջինջ յեքերում, մխա՛ց անուշ ու
բեքև:

Սիրտըս լեցուն նրանց սիրով՝ յերգեցի այս յերգը
յես,
Յեվ այն, այսօր, ուրա՛խ յերկիր, մի վառ ծաղիկ՝
բերի ֆեզ.

Փե՛զ, արևա՛ն իմ Հայրենիֆ, յերջանկության որորան,
Ուր կյանքը մի վարդ է չֆնաղ, սերը՝ բլրու
հագարան.





ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

1

Դրած մեկ-մեկ ձյուն-փուղ, կապած կարմիր ու
կանաչ՝
Մի ընդարձակ ուրջապարում փարացել են լայնականջ

Հագարավոր դարերի ականատես հանց վկա
Մոկաց չփնաղ աշխարհի ծերուկ լեռները հսկա:

Առնո՛սն ահա ալեգարդ, Կոռոշապահն անմամն,
Գլուխներին արևի ապստոշը վռսկեման.

Նրանց հանդեպ թիկնավետ Ավախորիկ, Ռւմուրմեն,
Ուր հանգչում ե արևի հարսը հուրնի-հրեղեն.

Ու հյուսիսում՝ ձյունափառ Յեղերովը վիթխարի,
Նրա դիմացն ամպամած լեռնաշղթան Բարվարի:

Պննրված բյո՛ւր ծաղկունփով, աղբյուրներով
աղամանդ՝
Այդ լեռների շուրջապարում կա յոթ հովիտ
արգավանդ,

Ուր դարերով չարաչար չարքաշ մշակը հողի
Գործել ե վառ գույներով հագար կապերտ ու խալի,
Բանել նախշեր վարդագեղ արևի յոթ յերանգով,
Ու այդ վարդերը ցողել արշուն-արցունք-փրտինքով...

2

Հովիտներում այդ՝ Մոկաց ժողովուրդը անդադրում
Աշխատանքով մեղվաջան մեղրահացեր եր լցնում,

Բայց լիզում եր նա միայն ծաղկեփռին իր վոտփի,
Բռռերն ելին ճաշակում անուշ մեղրը փեքակի:

Մեկիք-բեկերն անաշխատ, գոռոզ, անսիրտ ու
հարուստ,
Վորոնց սուրը անաղոք «որհնրված եր ի վերուստ»,
Գնում ելին ծանր ու մեծ հարկի բեռներ ահագին
Աշխատավոր և աղքատ ժողովրդի շալակին:

Հանց Յեղերով սարի խիստ բուք ու բորան կատաղի,
Վոր կը խեղդի ճամբորդին ու ձյունի տակ կը քաղի՝

Շառաչում եր ահավոր նրանց մտրակը վայրագ
Ու խարանում ամեն ինչ, անում խոլյան, ավերակ:

3

Արշունաբբու, գիշատիչ անգղի նման ահագին՝
Կոլոտ-կոջեն եր իշխում Մոկաց են շեն փաղափին:

Շուրջը՝ բերրի-բարեբեր դաշտ ու արոտ բովանդակ՝
Մեծահարուստ բեկը այն առել էր իր թևի տակ :

Տիրում էր նա սարերին, ահ ու սարսափ տարածում,
Ծիլ ու ծաղիկը նրա հոտերն էլին արածում :

Կովեր ուներ և ընտիր մծույզների յերամակ,
Կամակատար գայլերի արյունըռուշտ մի վռնակ :

Նրա՛նն էլին ամեն ինչ,—Մոկսի հարուստ են բեկին,—
Աղբյուրների ջուրը ջինջ, բեռնով արծաթն ու վոսկին :

Մայիսական վարդի պես նոր բողբոջած կույս աղջիկ .
Ինչ վոր լավ էր ու սիրուն, ինչ վոր ընտիր, գեղեցիկ :

Միր-Մահմուդի անունով կեղեփում էր անողոփ,
Խեղդում ըմբոստ գեղջուկի ամեն մոունչ ու բողոփ :

Չէր խնայում ահարկու նրա բռունցքը անգութ՝
Սշխատավոր ու չարֆաշ ժողովրդին հայ ու ֆուրդ :

Ծծում էր նա սարդի պես իրա թակարդն ընկածին,
Նրա ծանրը լծի տակ տնփում էր խեղճ մոկացին :

4

Ո՞վ է անվեհեր այն կտրինը սեգ,
Յեղած շինական հյուղից հասարակ,
Վոր չի՛ թեփում իր գլուխը յերբեք

Արձախում բեկի համբավն ահառիկ
Ու նրա ծանրը բռունցքը հուժկու
Զե՛ն սարսում սարի նման անառիկ
Քաջի ամրաշեն ամբողջը հոգու :

Իր բարձրագագաթ լեռների վրա
Սավառնող հզոր արծվի պես ագատ՝
Մոկաց աշխարհի քաջ իգիթն է նա,
Նրա սիրելի վորդին հարագատ :

Սիրում է չֆնաղ սարերը մսկաց,
Կանգնած յերկնի յագուր մշուշում,
Զյուն-ֆուռների շուրջը փաթաթած
Ամպերի ծալ-ծալ փռչին ապրշում :

Սիրում է փախչող երեն գեղեցիկ,
Վոր սլանում է դեպ սարերը սեպ,
Ու դեպի վորսը թռչող սլացիկ՝
Իր հրացանի գնդակն անվրեպ :

Սիրում գույնզգույն ծաղկումներ պես-պես
Յեվ աղբյուրները վնիտ, խոխոջուն .
Յերկնի խաղաղ ովկիանոսում՝ վես
Ճախրող համարձակ արծիվների չուն :

Սիրում է համեստ հյուղը աղֆառի,
Ու շինականի շնորհքը մարտար
Յեվ արևակեզ նրա մակատի
Քրտինֆով դատած սև հացը արդար :

Յեւ վա՛յ անամոք այն չարին-վատ իժ,
վոր այդ սև հացը խել կամենա.
Զի՛ բողնի յերբեք նրան անպատիժ
են խեղնի պաշտպան բազուկն անխնա:

5

Հաղթաբազուկ քաջը այդ Մոկաց-Միրզեն Ե արի,
—Մի թիկնավետ տղամարդ, կաղնու նման վիթխարի:

Գլխին փուռ սպիտակ, շուրջը փռչին ծոպագարդ,
վոր զարդարում Ե նրա նակատը լայն ու հպարտ:

Գրչանկար ու բարակ հոնքերի տակ՝ սիրաքով
Շողշողում են ծիծաղկոտ սև աչքերը — յերկու ծով:

Բեխերը սև նորածիլ, շուրթերը մուրր ու ֆնուշ,
Լեզուն—բլրուլ հագարան, սիրտը— սիրո ծո՛վ անուշ:

Հագին նախշուն շալ-շապրկ, սիրուն նախշերը վրան,
Մետաֆսահյունս մարը պիրկ գրկում Ե մեջքը նրա,

Ուր խրում եր պատյանում արծաթակոթ մի խանչալ,
Ծխախոտի տուփը իր, փրագ չիբուխը յերկար:

Սագում եր լայն թիկունքին—գանգուրներով սևասուև,
Սև ամպն ինչպես լուսնյակին չուռ-ճյազախիկը
անթև:

Ու շավարը խշխշուն, վոր հասնում եր կրնկին,
Հու՛ք եր տալիս վայելուչ նրա պարթև հասակին:

Մեծ սարի մամբեն փռչի յե նորից,
 Փռչին ամպի պես յեղնում ե վետ-վետ,
 Մոկաց-Միրզեն ե դառնում սարերից
 Իր յոթը վոքական ընկերների հետ:

Հարուստ ե նրանց վորսը այդորվա,
 Դառնում են ուրախ ու գվարքագին.
 Զարկած բերում են ուսների վրա
 Յեղնիկ, յեղջերու և արջ ահագին:

Ու շուրջը նրանց, գրկած դաշտ ու սար,
 Հագած իր շֆեղ շորերը նախշուն,
 Փռվել ե ահա գույներով հագար
 Մոկաց աշխարհի գեղեցիկ աշուն:

Արևը սարի կատարին չոփած
 Նայում ե յերկրին հրե կարոտով,
 Ու լցնում չֆնաղ աշխարհը Մոկաց
 Մի կախարդական բովիչ հեֆիաթով:

Յերգում են սիրով արեգն ու յերկիր...
 —Նրանց լուսեղեն լեգուն ո՞վ գիտի,
 Արբել ե այդ խոր յերգին ունկնդիր
 Հոգին հիաստանչ Մոկաց իգիթի...:

Ծփում ե խաղաղ վանա ծովի պես
 Սիրտը լիռլի աշխարհի սիրով,
 Լսում բնության հոյակապ ու վես
 Հեֆիաթը հյուսված վոսկի լույսերով:

... Այս ի՞նչ աղմուկ ե մոտակա գյուղում,
ի՞նչ աղեկըտուր հառաչ... սպասիր...
Այն ո՞ւմ եմ այնտեղ կենդանի քաղում,
Ո՞վ ե պղծում այս հեփիաքն անբասիր:

Ականջ եմ դնում... գյուղից խաճայն
լսվում ե աղմուկ, աղեկեզ հառաչ...
Յե՛վ շեհ արագ, վարսկան խումբը այն
իր ֆաջի հետքով նետվում ե առաջ:

Տ

Մի շարաք ե, վոր անգուր Թահար աղեն հարկահան
Գյուղի բկին ե չոֆել իր մարդկանցով հոգեհան:

Տանուտերի հետ խմբով մտնում ե նա տնե-տուն,
կուչ ե գալիս նրա բիրտ մտքակի տակ հարկատուն:

Բռնել ե նա բռան մեջ գյուղը անմար և աղֆատ
Ու փամում ե նռան պես, հյուրը խմում կաք առ
կաք:

Ով խոսում ե համարձակ, բռնության դեմ բողոքում,
Բանտարկել ե տալիս նա տանուտերի մարագում:

— Ո՞վ կարող ե դեմ գնալ տերունական պահանջին,
Նրա հարկը պետք ե տալ, քեկու՜ պատահը
վերջին:—

Մոնչում ե ահարկու թահար աղեն հարկահան.

Աչքը տնկած անկյունում կանգնած սիրուն աղջըկամ:

Ու հավաքում են այդպես՝ դրամ, գարի ու ցորեն,
Իսկ ով չունի՝ անգիջում փաշում ա՛յլ իր փոխարեն:

9

Բայց մի ծերուկ ալեհեր, յերկուտակված մի ջուլիակ,
Վորից բռնի խեցին տակի կապերտը միակ,

Զը դիմացավ... և ահա քֆելու հետ միասին՝
Տարավ բերավ, մի ապտակ հարկահունի յերեսին...

— Ինչպե՛ս... ցմբած մի ջուլիակ թահար աղին
ապտակի՞, 3
Ծեծել այնքան փալքառին, վոր շան նման սատակի...

Յե՛վ ալեգարդ ծերուկին յերկու զինված վոստիկան
Քաշ տվեցին գյուղամեջ:— Տեսնեն բոլորն ու
տոսկան:

— Խարազանի հիսուն գա՛րկ, — հրամայում ե ահա, —
Ծեծել այնքան, վոր ընկած տեղից ել վեր չը կենա...

— Թահա՛ր աղա, խնայիր, ծեր ե ու չի՛ դիմանա...
Հերմակ միրֆին մեղֆ արի... վերև աստված կա,
աղա՛...

Մըմնջում են մի ֆանի գյուղացիներ վեհերտ,
Ու ֆստմնում են բոլորն հրամանիցն սնամոք...

— Ովքե՞ր են այդ, վոր մեղքից և աստըծուց են
խոսում,
Դե սկսի՛ր, ասում եմ, ել ինչո՞ւ յես սպասում:—

Հրամայում ե դաժան հարկահանը զրկվորին,
Ու խարազանը ահա մորակելով ողն ուժգին՝

Փաթաթվում ե ծերունու մերկ իրանին ոճի պես.
Քարտու՞մ ե ամբոխը տեսարանին այդ ի տես...

Դալարվում ե ծերունին, աղեկըտուր բառաչում,
Ամեն անգամ, յերբ այրող խարազանն ե շառաչում:

Փռչելովու մակատից հորդ արյուն ե հոսում տափ,
Յեվ ալ կարմիր ե ներկում նրա մորսւփն սպիտակ...

Յեվ ամբոխից համարձակ մի գյուղացի կրակոտ՝
Աղաղակում ե դահին.— բավակա՛ն ե, անամոթ,

Խեղճի կաշին փերթեցիր, մա՞հն ես ուզում,
ա՛նորեն,—
Ու դառնալով ամբոխին աղաղակում ե նորեն.

— Ի՞նչ եք կանգնել, այ մարդիկ, փարացել, ճայն
չեք հանում,
Յերբ վոր աչքի ձեր առջև շունը մա՛րդ ե սպանում.

Նամո՞ւս չունեք դուք թե սի՞րտ, վրա՛ տվեք չորս
կողմից...

Ու հուզվո՞ւմ ե ամբոխը, ինչպես անտառը հողմից...

Հարձակվում են դեպի նա աղաղակով, աղմուկով
Գլուղացիները բոլոր զինված ֆարով. մահակով...

— Վաստիկաննե՛ր, ֆշեցե՛ք եղ ամբոխին ստահակ,
Թե չե իսկույն բոլորին կանեմ այստեղ շանսատակ...

Հոխորտում ե հարկահօնն, յերբ մեկը ձայն ե տալիս.
— Մի՛ վախենա՛ք, իր խմբով Մոկաց-Միրզե՛ն ե
գալիս...

10

Ինչպես ակնակիր խաղարով պատած
Մեջ կես գիշերին արևը ծագի,
Ինչպես ամպերի զրահը պատռած
Շառաչի հանկարծ սուրը կայծակի,

Հասնում ե ահա ֆաջ Մոկաց-Միրզեն
Իր յոթը կտրին ընկերների հետ,
Կապած շողշողուն պատրոնտաշ ու գեն,
Հանց հարկահանի սրտում ցցվող նետ:

Ժողովուրդը լայն շրջան բաց արած
Ընդունում ե իր աննման ֆաջին.
— Տանուտերն ի՞նչ ե փսփսում կսամաց
Կատաղած Թահաթ աղի ականջին...

11

Քաջի համբավն ե իսկույն ամբողջ գլուղը ձեն տալիս,
Հավաքվում են մանր ու մեծ ամեն կողմից ու գալիս:

Գլուղամիջում բազմութիւնն հուզված անտառ է
դառնում,
Մռկաց-Միրզեն՝ կաղնի ծա՛ն աշդ հողմածուխ
անտառում:

Շրջապատած հարազատ իր հերոսին փաջադուն՝
Բաց է անում նրա մոտ ժողովուրդն իր փակ լեզուն:

Իրենց սև սրն են լալիս, խոսում հուզված ու խոսո՛ւմ,
Նրանց լեզվից՝ անազատ մարդու մեծ վիշտն է
հոսում:

Հոսո՛ւմ, լցվում հորդօտաւ են փափ սիրտը վրդով.
Ինչպես Բանդի-Մահու գետ, վոր թափվում է վառա
ծով:

Յեվ ուռչում է շարունակ այնտեղ ցատումը հսկա,
Ալիֆի պես վիթխարի, վար շառաչում է ահա՛...

— Ասա՛,— գոռում է կանգնած հարկահանի դեմ առ
դեմ
Մռկաց-Միրզեն, ինչպես սար՝ մամռակալած ժայռի
դեմ,—

Մի՛թե քեզ կին չի ծնի, կամ չես ծծել դու մոր կաթ,
Ի՞նչ ես ուզում, ա՛նամոթ, ժողովրդից ես աղփառ:

Բ՛վ է տվել իրավունք՝ խեղճին այսպես տանջելու.
Խոսի՛ր, քե՛զի խանչալըս արյունո՛վդ եմ ներկելու...

— Թափել արշունըս գուցե դյուրին լիներ կտրիմին,
Թե կաթիլի փոխարեն մինչև կաթիլն ի՞նչ վերջին՝

Զը վնասեր իմ տիրոջ, վորի հզոր քրի տակ
Իր գլուխն ե խոնարհում Մոկսը բոլոր-բովանդակ.

Բայց քե ն՞վ ե վորսորդին տվել լեզու այդպիսի,
Վոր նա Թահար աղի դեմ այսֆան հանդուգն խոսի...

— Ո՛վ ե տվել այդ լեզու՞ն,— իմ մայր յերկի՛րը հզոր,
Ժողովուրդն իմ հարազատ, նաև բազուկըս այս
գոր...

Պատասխանում ե խիզախ, ու շառաչուն մի ապտակ՝
Են առյուծին քիչ առաջ՝ դարձնում հլու նապաստակ:

— Հանձնիր իսկույն բանալիքն ամբարի ու մարագի,
Իսկ դու քո այդ վոհմակով բռնիր նամբան փաղափ.

Գնա պատմիր, ինչ տեսար, խոսիր վորտեղ, ում
կուգես,
Բայց ել աչքիս չերևաս, յեքե կյանքըդ փաղցր ե
քեզ.

Միևնույն ե, իմացիր, գյուղից վա՛չինչ չես տանի,
Ու փառք տուր քո աստըծուն, վոր մնացիր կենդանի:

Իսկ դու, ըսե՛ս, այսուհետ ժողովրդին լա՛վ նայի,
Թե ուզում ես, վոր գյուղը քո կյանքը քեզ խնայի:

Առդ ստացիր ինձանից բանալիներն այս, ահա',
Յեւ մարագի, ամբարի դռներն իսկույն բաց արա,

Մարդկանց ազա՛տ արձայիր և ինչ իլել ե՛ք բռնի՛
Հետ տուր դարձյալ տերերին, ա՛յս ե կամփը բոլորի։

12

Յերկրին հագար համբույր տալով
Զքնաղ արփին մտավ մայր,
• Աշնանային գիշերը գով
Վառեց աստղեր անհամար։

Ու լուսերես նոր էարսի պես,
Անուշ ժպիտն յերէսին,
Յելավ ահա սիրունատես՝
Սարի ուսից մի լուսին։

Տեսավ կանգնած են իգիթին
Գյուղամիջում՝ իմաստուն
Խօսք ե՛ր ասում ժողովրդին,
Նրա սիրով միշտ լեցուն։

• — Վոգմին պաշտպան փշեր ունի,
Խայթոց փոփրիկ են մեղուն,
Նա խայթելով մահ կը գտնի,
Բայց չի՛ ների քշնամուն։

Իսկ դուք մարդ ե՛ք. ունեք ճեռներ,
Ունեք լեզու և բազուկ,

Ինչո՞ւ համար նմանին ձեր
Դառնա՞ գերի և ստրուկ :

Զի՛ հանդգնի վոչ վո՞ք յերբեք
Դիպչելու ձեր մեյ մազին,
Թե՛ զոր լինե՞ք դուք սրտով մեկ
Թշնամու դեմ՝ միասին...

Ասում ե նա : Ու կրածեշտ
Տալով քաջերն այ՛ն նորից
Վարսելն ուսած՝ դառնում են հե՛ռ,
Լուսինն իրենց ուղեկից :

1?

— Են Առնոսա սարը սուսուն,
Պես-պես ծաղկունքն վրան,
Մոկաց-Միրզի բոյժ բոսուն,
Ծով-ծով աչքունքը վրան :

Բարվարը մութ ~~ամպելի մեջ~~,
Կայծակի սուրը վրան :
Մոկաց-Միրզեն կտրին ե պերն
Սրծաթե քուրվ վրան :

Մոկաց-Միրզեն— արև՛ նրան,
Սարի նման, սարի լան,
Բյոզ-Բադավեն ձիու վրա՛
Մի կտրին ե լայնալանջ :

Զի՛ դիմանա և վո՛չ մի կին,
Ով սիրտ ունի կրծքի տակ,
Փառփից, գանձից, վոսկուց՝ կրկին
Մոկաց-Միրզի սերը բանգ:

Նրա անուշ մեկ համբույրը
Հագար ծաղկի բույր ունի,
Ծով աչքերում հոգի վառող
Անհանգչելի հուր ունի:

Յերնեկ վարդին եմ բախտավոր,
Ում վրա նա բա՛ն ունի,
Յերնեկ նրան, ում համար վոր
Յերկու անուշ բա՛ն ունի...

14

Թռչո՛ւմ համբավը այսպես, գովքը հնչում է վնիտ,
Յերզի ազատ քեներով մտնում սարայ ու խրնիթ:
Գովերգում եմ աշուղներն գյուղերից-գյուղ շրջելով,
Հուզում սրտեր սիրատենչ իրենց անշուք սագերով:

Զանգին-կանի վրանում աշուղն ահա ականջ
Գովքն է անում պատվական եմ կտրինի անվեհեր.

Շուրջը առած մի յերամ կաֆավների գեղեցիկ՝
Հարվածում է իր սագի բույր լարերը նա ձիգ:

Յերգն արևի շողփի պես շողշողում է, բրբրոո՛ւմ,
Սիրո անուշ հուր վառում սիրունների սրտերում:

նա փակվում են յերազուն նրանց աչքերը ծով-ծով,
Տարված են կույր գուսանի յերգի պարթև հերոսով:

Յերգո՛ւմ ե նա զարկելով ձիգ լարերին՝ խանդավառ,
Լայն բաց արած դեպի վեր յերկու աչքերն իր

խավար.

Յերբ վոր հանկարծ— նետահար կաֆավի պես
թևաթափ՝

Հավո՛ւմ ե իր մոր գրկում խանի աղջիկն
ուշաթափ...

— Զո՛ւր հասցրե՛ք, ջո՛ւր իսկույն... Ի՞նչ պատահեց
աղջըկաս...

— Լո՛ի՛ր աշուղ ցավիս հետ քո սագի ձեռն ել,
պակաս...

15

— Ծով լուսին— գարնան գիշեր,
Ման յեկանք, բախչեն խառ եր.

Բլբլուլը վարդի վրա՝

Մուրազին իրա հաս եր,

Զարթնեցի... քարին զարկած՝

Սիրտըս մի կոտրած քառ եր:

Մըտիս պես սիրուդ առաջ՝

Իմ այգու դուռը բաց եր,

Ալ-վարդը հարյուր թերթեն՝

Ադամանդ շաղով քաց եր,

Փաղեցի, հոտ փաշեցի,

Սիրտըս լի ցավ ու լաց եր:

Այ վորսկան, սարի՛ տղա,

Յեկ, զարկած քո ավը տա՛ր,

Սիրական, արի՛ տղա,
Քո զարկած կախալը տա՛ր,
Այ անգութ, քարի՛ տղա,
Յեկ, տված քո ցավը տա՛ր...



— Մնդուկ ունեմ ջեզի,
Մնդուկիս փետն ընկուզի,
Միջին ջանքաս, ապրշում՝
Ինչքան վոր սիրտըդ կուզի:

Հակտիս վոսկին շարերով,
Մատնիս անգին քարերով,
Իզիք տղա, լի՛ց սրտիս
Ձին-սուրահին քո սիրով:

Քեզ իշխանի բա՛խտ պիտի,
Վոսկուց շինած բա՛խտ պիտի,
Քեզ պես քաջին՝ գանգինի
Բախչից քաղած վա՛րդ պիտի...



Այսպես քանի՛ մեծոժիտ աղջիկների սիրավառ
են վորսկանը՝ հանց յեղնիկ գարկեց արավ նետահար,

Բերք իր սերը տվեց նա Ալ-խաթունին անաղարտ,—
Հովվի համեստ պարտիզում ծաղկած սիրուն մի ալ-
վարդ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Հրդեհվում եր մայրամուտում գունդն արևի
քոցակեզ,
Սիրո անուշ կրակն ընկած աղջըկա ջինջ սրտի պես:

Մոկաց չֆնաղ հովիտներում վառած վարդեր
վոսկելույս՝
Ծիծաղում եր գարնանային մի գեղեցիկ վերջալույս:

Հնչում եյին քոչունների քովիչ յերգերն ամենուր,
Դայլայլեյին ասես մեկտեղ անքիվ սագեր ու
չունգուր:

Վոչխարների խառըն մայուն, մեծաբառաչ հորքն ու
կով
Լցրել եյին ամենուրեք մի կենսահույզ աղմուկով:

Մոկաց-Միրզեն զով սարերից, զարկած յեղմիկն իր
ուսին՝
Տուն եր դառնում վորսորդական իր խմբի հետ
միասին:

Հասան ահա Ծափանց գյուղի ձորադրյուրը
ֆաղցրահամ,
Ուր Քառել եր սափորավոր աղջիկների մի յերամ:

Նրանք վորսկան խումբը տեսած՝ կծերն առուհ և
խակույն
Ձորակն ի վեր Քռան արագ՝ հավերի պես
գույնգգույն:

Մեկը միայն,— այդ յերամից հետ մնացած մի
կաֆավ՝
Մնաց կանգնած աղբյուրի մոտ՝ կուժը ջրին դեռ
ծարավ:

Մի չիմարի, չֆնաղ աղջիկ, ծամերը Քուխ ու հող—
հող,
Սև աչքերը անմահական մի—մի փինջան արևշող...

Վոր կանգնել եր շվար, մուր, ձեռքը բարախ իր
սրտին՝
Ու հիացած նայում եր լուռ Մոկաց պարբև իգիթին:

Տեսա՛վ նրան Մոկաց—Միրգեն... սիրտը արագ
թալրաա՛ց՝
Թռչունի պես անակնկալ վորսի թակարդը ընկած:

Ու մինչ վորսկան խումբը հալարտ սլանում եր ձորն ի
վեր,
Մոկաց—Միրգեն աղբյուրն իջած՝ սիրո ջրին ծարա՛վ
եր...

Նայեց կտրիմն այն աղջըկան— վարդի մի թուփ
 մորաբաց,
 իմեք բլբուլ սիրակարտո՛ւ՝ նրա տեսից գարնըված :

— Զրվո՛ր աղջիկ, քո այդ կծով ջուր մի կուտա՞ս,—
 ասավ նա,
 Մոկաց-Միրզեն խմի՛ր անուշ, ծախավ սիրտը
 հովանա՛...

Աղջիկը լո՛ւն՝ կուծը լցրեց գույալ ջրով գոգըղուն,
 Մինչ մեկ ուրիշ աղբյուր նրա սիրտն ա՛յլ ջրով եր
 ցողում .

Աղբյուրը գով կաթիլներով մարգարտաշիթ ու
 հստակ
 Ցողիկներ եր շարում նրա ձեռներին—վա՛րդ
 սպիտակ :

Մոկաց-Միրզեն այդ շողշողուն կաթիլներում
 ցոլացիկ՝
 Տեսնում եր իր սիրո ծիծղուն ծիածանը գեղեցիկ...

Կըկրլալեն ջուրը խմե՛ց անապատի պես ծախավ,
 — Զեյի՛ խմել այսֆան անուշ... ու աղջըկան հարց
 արավ .

— Քո ջրի պես անուշ ու գով, եդպես հուրմի-
 հընդեն,

Ջրվոր աղջիկ, ասա դու ինձ, ռում աղջիկն ես, վո՞ր
գեղեմն:

— Ծափանց գյուղի հովիվն ե հայրս, — պատասխանեց
ամոքխած,
Յուրաքանչյուր այտի վրա մի քափուր վարդ
նորաբաց:

— Ջրից գուլալ ջրվոր աղջիկ, ի՞նչ ե անունդ
անուշիկ:
— Ալ-հաքունն ե, — գլուխը կախ պատասխանեց նա
հուշիկ:

— Հովվի՛ աղջիկ, այդ ի՞նչ խորոտ անուն ունես
քանգագին,
Մոկաց-Միրգեն Ալ-հաքունին դուրբա՛ն կանի իր
հոգին...

... Մի ակնքարք ասես բոլոր ձայներն իսկույն
լռեցին,
Ֆերկու վնիտ, գուլալ աղբյուր իրարու մեջ
ձուլվեցին...

3

Ֆերկու նախշուն
Սիրուն քոչուն
Նուշ սեր տվին, սեր առան
Ֆեվ աղբյուրին
Սիրահնչյուն
Մի տաղ տվին ու քոհն:

Սարի ուսին
Կիսալուսինն
Արոսի պես դուրս յեկավ
Ու լող տալով՝
Յերկնփի մով
Անծայրածիր ծովն ընկավ :

Վառ-վառ աստղունք—
Պայծառ աչքունք
Յերկնփից վար նայեցին,
Զրերի մեջ
Հագար ակնունք
Ու ջալահիր քափեցին :

Զուրը ամիին
Ծամիին-ծամիին
Այլակների շրթունքով
Մոկաց-Միրզի
Սերն են պատմում
Քնքուշ-անուշ շշուկով :—

Սերը վառման,
Վարը չառան
Շատերն իրենց սուտ վոսկով,
Մոավ արագ
Մի հասարակ
Հովվի աղջիկ գուտ խոսքով :

Յերկնփի տակ
Զինջ ու հստակ

Աղբյուրն անո՛ւշ գեղաշեր՝
Աստղերին լույս
Մինչ արշալույս
Հեփիա՛թ պատմեց այդ գիշեր :

4

Ամալի քեռվ ճյունը քռավ սարերն ի վեր վիթխարի,
Նստեց նրանց բարձրը ուսին հանց սպիտակ աղավնի :

Մոկաց սիրուն եմ աշխարհին ծաղիկներով զարդարուն
Ու հավփերի անուշ յերգով զմզաց չֆնաղ մի

զարուն .

Ծիւր հողից գլուխն հանեց, ժպտաց պայծառ արևին,
Ծիծեռնակը վերադարձավ ու նորոգեց բունը հին :

Հոտերն ամեն արուս յելան, հովվի յերգն ե

զրնգում ,

Մոկաց յերկրի գարունը վողջ նրա գուլա՛լ սրնգում :

5

Կապած գույնզգույն մեզար, դաստախում,

Մոկացի ջահել աղջիկները վարդ

Քելան ծաղկավետ սարերը նախշուն՝

Բանջար փաղելու յերգերով զվարթ :

Ծաղիկների մեջ ծաղիկ նրանք ել—

Վարդ ու մանուշակ, նարգիզ ու կակաչ՝

Զնգում ե նրանց ծիծաղն անարգել

Զերթ վնիտ ու գով աղբյուրի կարկաչ :

Ու սիրո ֆեֆո՛ւշ վարդը սրտերում,
Ծաղկած մարգարիտ ցոլուն շաղերով՝
Ճախում է անուշ ու թովիչ բուրում
Նրանց սրտաբուխ գուլալ տաղերով:

6

— Սարերում սուսուն-ամբուլ,
Կակաչը կարմի՛ր կուտա,
Իմ յարը բաղի բլբուլ՝
Ալ-վարդին համբո՛ւյր կուտա,
Համբույրի հոտի՛ն մեռնեմ,
Վնուշ համ ու բո՛ւյր կուտա:

Դուրզիդ նխշուն փռշին
Ծոցիս մեջ պա՛հ ես տվել,
Իմ սրտում սիրուդ անուշ
Կրակը շա՛ղ ես տվել,
Փակ լեզվիս, անո՛ւշ տղա,
Դու հագար տա՛ղ ես տվել:—

Յերգում են հսպես,
Ասում-ծիծաղում,
Յերգելով՝ պես-պես
Բանջար են փաղում:

Լուկ Ալ-խաբունն է—
Վարդի պես փքքուն,
Վոր մոռացել է
Պողն ու սիվտըկուն,

Ծաղիկ ե փնջում,
Գույն-գույն բուրավետ,
Ու սրտի միջում
Խոսում նրանց հետ...

7

-- Ախի՛, Ալ-Խաթուն, եղ ի՞նչ ես անում,
Հերի՛ք ե, արի՛,
Ծաղիկները թող, մեզ հետ խաղ ասա
Ու բանջար փաղի,

Տես, արևն ընկավ, հովն ե հեվարի,
Դառնալու յենք տուն,
Դաստախունըդ լից, շուտ արա, արի,
Ախի՛, Ալ-Խաթուն...

Կապած մեզար, դաստախուն,
Յեղնիկների պես արագ,
Աղջիկները կարկաչուն
Աղբյուրն իջան սառնորակ.

Զուր խմեցին բոերով,
Լվացվեցին, հովացան,
Անուշաբույր հովերով
Սրբվեցին, չորացան,

Ապա մտած փոկ-փով
Աղբյուրի ակը դալար՝
Յերեմուկի թերթերով
Բացին սրտերը իրար:

— Սիրի-սիրի,
Քեզ ո՞վ սիրի.

— Խաղ-տաղ ասող եմ տղեն,
Սազի նման իր անեղով՝
Բամբակ գգող եմ տղեն:

— Սիրի-սիրի,
Քեզ ո՞վ սիրի.

— Կտավ գործող եմ տղեն,
Արագ -արագ յերկու ձեռքով
Մեղմ գգող եմ տղեն:

— Սիրի-սիրի,
Քեզ ո՞վ սիրի.

— Դաշտ գնացող եմ տղեն,
Իր պսպլուն կեն մանգաղով
Արտը հնձող եմ տղեն:

— Սիրի-սիրի,
Քեզ ո՞վ սիրի.

— Հովիվ քույս-քույս եմ տղեն
Իր բլուլի անուշ տաղով
Սիրտդ հանել ե տեղեն...

Ծիծաղում եմ, ծափ եմ տալիս
Նստած ահա բոլորակ,
Այ-հաքունի հերթն ե գալիս,
Սիրտը զարկում ե արագ:

— Սիրի-սիրի,
Քեզ ո՞վ սիրի.

— Սարի մման են տղեն,
Կուռը դալար, սիրտը բարի
Քաջ ու կտրին են տղեն:

Մոկաց-Միրզե'ն—իգիթ վոքական—
Աշխարհի մեջ հատ չկա',
Սերը հալա՛լ, սիրտը գուլա՛լ
Հովվի սիրուն աղջկա:

Փովո՛ւմ է շիկնած այտերի վրա
Վարդի քերթերով սերը կուսական,
Յեւ աղջիկների ծաղկեփունջն ահա
Իր մեջ է առնում հովվի աղջրկան:

Կատակում ուրախ, աչքով են անում,
Աչքերովն իրենց ածուխ ու ծավի,
Ու զանգակի պես զնգում է ձորում
Նրանց արծաթե ձայնը ծիծաղի:

8

Նրանց սիրո լուրը քռավ, ամենուրեք ձայն տվեց,
Քանի՛ սրտում քառը դրած հույսի հավքը
Բոցըրե՛ց...

— Զուր է տվել Մոկաց-Միրզին Ալ-հաթունը իր
կծով,
Ու ջրի հետ անո՛ւշ կրակ՝ սև աչքերի գույգ նշով...



— Կանաչ-կարմիր շաղ տված
Ես ի՞նչ գարուն ե սիրուն.
Վոչ մի սառույց չը մնաց,
Հալ ե ընկել ճներուն,
Աղջիկների գանգիմաց՝
Սրտերն ամեն երերո՛ւն:

Բլբուլը քախտն ի՞նչ անի,—
Նրան փշի վա՛րդն անուշ,
Բանց արծաթ-ե փինջանի՝
Հողե կժի ջո՛ւրն անուշ,
Աղփատ հովվի մինունար
Աղջըկա սե՛րն ե անո՛ւշ:

Բարվար սարից ծաղկեվոր
Հովը յեկավ — հարա՛վ եր,
Մոկաց-Միրգեն — արև որ՝
Սիրո ջրին ծարավ եր,
Վորսկանի վորսը այդոր
Սարի գյոգալ կափա՛վ եր:

Բաղում սուսուն ու սմբուլ,
Վա՛րդ ե բացվել քփի մեջ.
Մոկաց-Միրգեն մի բլբուլ՝
Թառած վարդի ծոցի մեջ,
Ալ-հաքունը մեկ հատ ե
Հագար ֆափուր վարդի մեջ:

Յերգե՛ց այսպես մոկացի ժողովուրդը տաղերգու
Սերը՝ սիրուն հարագատ ծաղիկների այդ յերկու:

Գարնան ծիլ ու ծաղկունքով գովերգ հյուսեց իր
փաջին,
Զենը հասավ նետի պես կուրտ-խոջի ականջին:

Ու հանց սուրը կայծակի ծառը մեղքի վերից-վար՝
Անակնկալ լուրը այդ բեկին արավ շանքահար:

Սիրտը նրա՝ սայրասուր այդ նիգակով խորախոց՝
Բեկը փշշա՛ց կատաղի, փնախնդիր ինչպես ոճ...

— «Հագար եղպես փաջ լինի, հագար իգիթ մեհիրվան՝
Ավաք չի՛ տա նա յերբեք Ալ-հաթունին անմաման.

Եղպես քառլան սիրուն կին միայն վայել է բեկի՛,
Ամարաթի գա՛րդ անգին, նախշուն հավքը
վանդակի»...

Տեսել եր նա Ծափանցի հովվի միակ աղջըկան,
Մտփումն ասել եր իրա՝ «եղպես կոկոն վարդ չկա՛».

Ու թողել եր՝ բացվի դեռ, վարդի նման բողբոջի՛,
«Ո՞վ սիրտ կանի այդ սիրուն աչք դրածին իր
դիպչի»...

Սակայն խլո՛ւմ են ահա իր մանկերից հավքը այն,
Ծիծաղո՛ւմ է համարձակ մի վիթխարի ախոյան»...

Գիշերն իջավ լուսընկա ու յերկնօվ մեկ կրկին
Շաղ տվեց իր շողշողուն ադամանդները անգին :

Զեփյունները սարերից փերինների պես անտես՝
Դաշտերն իջան քւիքւ, մտան այգի ու պարտեզ .

Ծափ զարկեցին ծառերի տերեւների հետ ֆնֆն՝ ու ,
Համբուրեցին կիսահաս խնձորները գեղաքուշ :

Ո՞վ է աղջիկն այն սիւրուն, հանց բոլորած մի լուսին,
Ման է գալիս պարտիզում ծուփ-ծուփ ծամերն իր
ուսին :

— Ալ-հաքո՛ւն է սիրավառ, գիշերային հանց փերի,
Բարձրանում է շողփի պես ծառը կլաք-խնձորի :

Յերեֆնուկի, կարոսի թերթիկներով յեռաքւ
Նախշում է խակ տակավին խնձորները գեղաճւ ,

Վոր արեւը հրաշուրթ համբույրներով բոբր ու տաֆ՝
Բոսոր ներկի բաց տեղերն ու փակ մասերն՝
սպիտակ :—

Ընծա տանի այդ սիրուն խնձորները նախշունակ
Ալ-խաքունն իր փեսային անբիծ սիրո նշանակ :

— Մուրագներո՛վ անբասիր, յերագներով լի՛ գիշեր,
Աստղ ու լուսին շողշողուն, ծառի նոսափ, կույսի
սե՛ր...

Լալ ու սուտակ
Աստղերի տակ,
Լուսնակ գիշեր կախարդուն,
Սեր են անում
Մոկաց-Միրգեն
Ու խորոտիկ Ալ-հաթուն:

Անուշ-անլո՛ւն,
Ախորժալուր
Ծղրիդի յերգը կիթառ,
Նրանք յերկու
Զվարթ մեղու՝
Սիրո քննուշ ծաղկին քառ:

Ու հագեթով,
Հուր կարոտով
Խոսում նորե՛ն ու նորե՛ն,
Մեկը-մյուսին
Պաչ են տալիս
Պաչ են անում փոխարեն:

Աստղ ու լուսին
Իրար ասին.
— Արևի լույսը վկա՝
Յերկնափի տակ
Սիրուց ել քանզ
Ուրիշ վռչի՛նչ դեռ չկա՛...

— Իմ անվեհեր իգի՛թ վարական,
 Իմ անսահման, անգին սե՛ր,
 Դողմում ե սիրտս ուռու մման,
 Յերագ տեսա ես գիշեր:

Նստել եյի ու բախտիս հետ
 Յերգում եյի ձայնով ցած,
 Մեկ ել հանկարծ դուսն առաջ
 Քո ձին տխո՛ւր խրխնջաց:

Յես վեր թռա, դուռը բացի,
 Նա մենակ եր ու տրտում,
 Ու աչքերիցն իր խելացի
 Դուլ-գուլ արցունք եր կաթում:

Վզովն ընկա ու լա՛ց յեղա,
 Ասի՝ ա՛յ Բյոզ-Բադավեն,
 Ո՛ւր ե տերըդ, վո՞րտեդ թողիր
 Իմ կտրինին ապավեն...

Անասունը լեզու առավ,
 Ասավ՝ «անբա՛խտ Ալ-Խաթուն,
 Մոկաց-Միրզեն խոր վերք առավ,
 Ու ել յերբեք չի՛ գա տուն»...

Դանա՛կ զարկին կսկծալի,
 Սիրտըս արին յերկու կես,

Քնից զարթնած՝ փուն չեր գալի
Թաց աչքերիս առանց քեզ...

— Ի՛մ աննման գյուգալ կաֆալ,
Իմ խորոտի՛կ Ալ-հաթուն,
Թող չը դողա սիրտըդ բնավ,
Ու յերբեք մի՛ տխրի դուն.

Ես աշխարհում չկա՛ մի սեր
Մեր անսահման սիրո պես,
Ես աշխարհում չկա՛ մի ձեռ,
Վոր բաժանի ինձ ու քեզ...

Ասում ե քաջ վարսկանը եմ,
Սրտին սեղմում սիրածին
Ու հրաժեշտ տալիս նորեն
Հեծած նժույգ իրա ձին:

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Փնե՛ր ե խոր, մանկան պես Մափանց գյուղը միամիտ,
Մեջքը-մեջքին տված կույր, անբազ խուղ ու
խրնիք:

Մութն ե նստել ամենուր, զարկած մագե սև վրան,
Մռայլամած բեկի պես լարել քակարդ ու դարան:

Վա՛րդ ե լուել գորարի անեղան յերգը բեկ-բեկ,
Ու մեռվը ջուլհակի չի՝ քոչկոտում ձեռքից-ձեռք:

Լո՛ւռ ե չորս դին ինչպես մահ, արթնն այս ժամ մի
միայն

Ավերակից կոնչող տխուր բո՛ւն ե վողբաձայն:

Ու... կիսո՛ւմ ե գիշերն այդ՝ սրտանմիկ մի սուր
նիչ...

Ինչպես ծխոը բազեյի նիրաններում գիշատիչ:

Ու զարկըվո՛ւմ են հանկարծ գյուղի շները բոլոր
Հաջոցներով կատաղի լցնում գիշերն ահավոր:

Ու ձիավոր խումբը սև առած անգին մի ավար՝
Մտրտկելով մութը խիտ՝ արշավում ե ձորն ի վար:

Բաց ե անում գյուղը իր ֆնատ աչքերն ահառած,
Զարհուրելի յերագից ասես իսկույն վեր քռած...

Մի ծերունի խելացնոր, սրունֆներով դողդոջում,
Վազվառն ե խավարում և ոգնություն ե կանչում...

2

— Վե՛ր կաց, իգիթ Մոկաց-Միրգա,
Հասի՛ր փամու դու նման,
Կոլոտ-խոջեն առևանգեց
Այ-հաքունիդ անմաման:

Յեկավ հեծյալ իրա խմբով
Կես գիշերին, գողի պես,
Գյուղը լցրեց սարսափահար
Հիչ-կականով աղեկեզ:

Զարկեց ինչպես Տուրկա-Գյալու
Սաստիկ բուֆը ահավոր
Յեվ աչքերի լույսը մարեց
Մինունարի ծերունի հոր...

3

Դաշունահար յեղած հանկարծ առյուծի պես
վիրավոր՝
Զարկում եմ մութն ու սլանում մի խումբ կտրին
ձիավոր:

Զայրույթը բարկ հուր է վառում նրանց անահ
կրծքի տակ,
Արշավում են ֆառասըրոյի՝ հասնեն խմբին
ասպատակ:

Ու սրաբշավ ձիերն իրենց ամեն վայրկյան խթանում,
Խավարը խիտ նրանց հանդեպ ավելի՛ յե խտանում:

Բայց մեղքում են գիշերն այդ սև՝ փաջերը հուր ու
հրկեզ՝
Մոկաց-Միրզի ձիու հետքով, վոր ցոլում է աստղի
պես:

Ամեն մեկը մի տաշտ ունի, մի ընտանիք ու մի
տուն,
Ամեն մեկը իր կրծքի տակ մի սիրտ ունի բոցկլտուն,
Ֆեվ իգիթի անո՛ւն անբիծ,— բեկ չե, քեկուզ ով
կուզի,
Զե՛ն քողմելու իրենց փաջի գլխից մի մա՛զ պակասի:

4

Ու խավարով լի ձորակում ահա՛,
Շանքերի նման սաստիկ ահարկու
Ընդհարվում են փաջ— ինչպես ածղահա՛
Իրար ախոյան խմբերը յերկու:

Ուժգին հարվածող սայրասուր ու սառ
Շանքերը նրանց կեռ դաշույնների

Շաչում են անդուլ ու պատառ-պատառ
ձեղձում անքափանց փողը խավարի:

Կովո՛ւմ են յերկար, մինչ ավարառու
են գոռոզ բեկի խումբը կարելիք՝
Տեղի տալով հաղթ այն ուժին հուժկու՝
Ճողապրում է քափ այն ձորակն ի վեր:

Սրտում ա՛հը են փաջի փառավոր,
Յե՛վ ուսին նրա սրի վերքը տաֆ՝
Փախչում է Կոլոտ-հոջեն ճիավոր,
Հաղթողին ռթած իր ավարը բանգ:

5

Ագառարար վարուժանի քեների մեջ սիրասուն
Թառեց նրա սիրուն մարին սրտիկը դեռ քրթում:

Նրա հզոր բազուկներում, շունչը նրա տաֆ շնչին՝
Լաց է լինում Ալ-հաթունը, լալով ասում իր փաջին.

— «Տար ինձ հեռո՛ւ, հեռո՛ւ տար ինձ, ի՛մ
ապավեն, ի՛մ իգիթ,
Ցած մի՛ դնի քեներից, մատա՛ղ հզոր բազուկիդ.

Մեր սարերը թռի՛ր արագ, թոցըրու ինձ, տար ինձ,
տա՛ր,
Քեզ հետ յելնենք Առնոս սարի ամենաբարձր
կատար,

Ուր չի՛ հասնի և վաչ մի բեկ իրա խմբով առաջատակ,
Ուր չի՛ բախվել արյուն յերբեք ու ճյունն ե միշտ
սպիտակ:

Արծիվների պես ապահով սարի վրա բուն դնենք,
Իրար գրկում ագառ, անլաց, անուշ յար ջան, սեր
անենք»...



Սարի ուսից յեկավ պայծառ լուսո աստղը շողշողուն,
Աստղը-մարին թևերի մեջ՝ արծիվն իջավ իրա բուն:

6

— Բազեն թռավ սև փայերուն,
Սիրտըն եր չար, աչքը արուն.
Ջարկեց տարավ Ալ-Խաթունին,
— Սպիտակ հավք մեջ հավքերուն:

Են ի՞նչ իգիթ վորսկան եր փաջ,—
Մատա՛ղ լինեմ նրա նետին,—
Սուր ճանկերով վորսը ճանկած
Չար բազեյին փռեց գետին:

Յեկավ գող-գող Կոլոտ-Խոջեն,
Կոլոտ-Խոջեն—են չար բազեն,
Վորսը թողեց, ինքը փախավ,
Հագա՛ր ապրի Մոկաց-Միրզեն:

Ժողովրդի հարազատ լան,
Արև՝ ե քաջ Մոկաց-Միրզեն,
իր աննման լուսնակի հետ
Հագա՛ր ապրի Մոկաց-Միրզեն :—

Յերգեց Մոկաց ժողովուրդը խիզախ կռիվն իր քաջի,
— Դալա՛ր մնա կուռը, ասին, — կաղնու նման
կանաչի՛ :

7

Ծխո՛ւմ ե լուռ կոլուռ-խոջեն նստած մեռակ և
արքունի :
Հոգին նրա—չոր ծառի պես հրդեհել ե Ալ-խարքունի :

Իր վավաշոտ աչքերի դեմ, ծխի մռայլ մշուշում
Տեսնում ե նա եմ սիրունի մարմինը մերկ—
ապրշում...

Ու պարզո՛ւմ ե բազուկները, վոր մի ունպով
ծարավի՛
Հիսուն բռնած աչուհների վերջին բաժակը քամի՛ :—

Բայց ընկնում ե քաար ձեռքից ու փշրվում շուշի
պես,
Ցնդում հանկարծ տեսիլը այն ձեռքից քոսած դուշի
պես :

Ու Ռա տեղ կանգնած հզոր իր ախոյա՛նը ահա,
— Մոկաց-Միրզեն յերիտասարդ—մի վիթխարի
աժդահա :

Վողջ գիշերը նրա չիբխի կրակն յերբեք չհանգավ .
 Վողջ գիշերը գիշատեցին զանգը նրա բյուր ագռավ...

Կովում պարտված գոռոգամիտ առյուծի պես
խելահեղ՝
 Վոխ ու վրեժ եր մոնչում վիրավոր բեկը ահեղ:

Մ. Բաղդաներն եյին կանչում յերրորդ անգամ զիլ
ձեռնով
 Ու ֆնած եր ֆաղաֆը վողջ լուսադեմի խոր ֆնով,

Յերրորդ խոջեն հանկարծ իր սև կծիկի ծայրը
գտած՝
 Խենթի նման անակնկալ ֆինախնդիր ֆրֆըջա՛ց...

Ու խելահեղ՝ յելավ. վոտֆի, վեր հանելով սեյիսի՛ն՝
 Հրամայեց անմիջապես թամբել իրա մծույգ ձին,

Առավ իր հետ յերրորդաարդ յերկու խուլամ
թիկնավետ՝

Ու խավարը միգակելով սլացան սև յերեք մետ:

Վրեժխնդիր դաժան մի իժ սև՝ ապառաժ են սարեն՝
 Լեզվի վրա դեղին մի թույն՝ սողում եր դեպ
ձգիրեն...

— Վռդդո՛ւյն պայծառ ամիրային—Միր-Մահմուդին
փառավոր,
Նրա ծառան գալիս և արդ Մոկաց յերկրից
հեռավոր.

Են գավառից, վոր միշտ հլու, կորագլուխ հայատակ՝
Ապրել և մեծ ամիրայի աստվածային շուֆի տակ:

Արդարադատ ու սրբազան կամֆը և սուրը նրա
Թող հավիտյան հովանավոր, կտո՛ւր լինի մեզ վրա:

Ժողովուրդը Մոկաց յերկրի, վախկոտ ինչպես մի
կատու՝
Վաղուց ի վեր յեղէլ և մեծ ամիրային հարկատու:

Սարեր ունի հարուստ վորսով, հոտեր ունի
բրդառատ
Ու լիակուրծ կթան կովեր, հողը բերրի,
արգավանդ:

Արհեստներով բազմապիսի ծաղկած և գյուղ ու
ֆաղաֆ,
Միրգ ու մեղրով շինականի շեն են մառանն ու
փեթակ...

Բայց քող ների ամիրապետ Միր-Մահմուդը
ֆաջածին՝

Իր վտտֆի հող ու հնազանդ հավատարիմ ծառային,
Թե ճա հզոր մեծ իշխանի հոգու յերկինք պայծառ

Շտապ բելած իր համբավով հանի ամպի մի
պատառ...

Այդ հարկատու ժողովրդից—մեր մեծուքյան
հպատակ՝
Ծնվել ե մի ամբարտավան, ինքնագլուխ անառակ,—
Մոկաց-Միրզե'ն—անհնազանդ, քաջ նետաձիգ մի
վորսկան,
Ինքնահավան յերիտասարդ—դեռ բանհինգ
տարեկան:

Զի՛ ճանաչում բոլորովին ամիրապետ ու սուլթան,
— Ժողովուրդն ե,— ասում ե նա,— տերը յերկրի
և իր տան.

Նա՛ յե ցանում, նա՛ յե հնձում, նա՛ յե հերկում
հողը կորթ,
Նա՛ վռոգում դաշտ ու հովիտ սուրբ քրտինքովն
իրա հորդ.

Զե՛նք տա հացը մեկն ոտարին, քե՛ վոր ուծով
լինենք մեկ,
Կորչե՛ն բոլոր,— ասում ե նա— ամիրապետ, տեր
ու բեկ...

Վայելում ե յերկրի սերը, համբավ ունի իգիթի,
Ու ժողովուրդը ապստամբ՝ քո դեմ հանում ե
վռտի...

Լո՛ւս՝յ նրան ձգիրեյի ամիրապետն ահարկու

Ու լցվեցի՞ն անմիջապես արնով աչքերն իր յերկու :

— Ո՞վ ե,— գոռաց,— լակոտը այդ, ունի փաջի նա
համբավ,
Վոր ինձ նման իշխանի դեմ պատրաստում ե մթին
դավ...

Կանչեց իսկույն իր գրագրին, սվեց գոռոզ հրաման՝
իր անունից ապստամբին գրել հատու մի ֆերման.

— Մինչև կրկի՛ն ծագի արևն ու իշխանիս սալամ
տա,
Նրա հոգին բռանըս մեջ թող ծոխ պես թաքտա՛.

Տեսնենք եդ ի՞նչ իգիթ ե նա, փանի՞ գոռոզ-գլխանի.
Վոր ինձ նման առյուծի դեմ կատուն վոտփի՛ կը
հանի.

Ամբարտավան լեզուն կտրեմ, գանգը անեմ յերկու
կես,
Ծուխը նրա յերկի՛նք հանեմ իմ դեյլանի ծխի պես...

— Իմաստո՛ւն ե իշխանը մեծ,— խոսեց բեկը
խորամանկ,—
Ու փաջ այնքան, վոր տաս փաջի գլուխ կտոնի նա
մեռակ.

Բայց քե ինչո՞ւ հարկադրված լինեմք դիմել ուժի
խիստ,
 Յերբ վոր նրան ձեռք բերելու ուրիշ միջոց կա
համզիստ :

Արդյո՞ք դուք չե՞ք հրամայի փերմանն այնպես
գրելու ,
վա՞ր բավ լինի մի սուրհանդակ նրան այստեղ
ընդհանուր .

Գրել անո՛ւշ քունոտ մեղրով, փոխարեն սև մելանի,
Քաղցրը լեզուն, ասած ե թե՛ ոճը բնից կը հանի...

Ժպտա՛ց խարդախ Միր-Մահմուդը... ու յեղեգմը
Քրջըված՝
 Ծեր գրագրի ճեռում՝ ներմակ թղթի վրա նռնա՛ց :

11

Վերջապույսն եր փովել հեռու հորիզոնում վսկեգոծ,
Յերբ սուրհանդակ ճիսվորբ մամբա ընկալ գիրբ ծոց :

Նրա հետոյ գիշերն իջալ Ճգիրե մեծ Բաղափն
Գիշերը՝ սև, զարհուրելի, ինչպես գրբաց կախարդ
կին.

Ամիրապետ Միր- Մահմուդի ամարաթում յերկու
սարդ

Գլուխ-գլխի՝ գործում եմ մի սարսավելի վորոգայթ:

Ընկած ե քալ գորգի վրա նարգիլեյի փողը—ոճ,
Ու հսկում ե դավը նրանց յերկաթապատ դուռը գոց:

ՋՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Հագարավոր քոչունների գեղգեղանքով յերգեցիկ
Ծածանվում եր ամառնային մի առավոտ գեղեցիկ :

Հովն եր փչում հովիտներից ու սարերից բուրավետ
Ու համբուրվում շեկ արտերի ալեծածան ծովի հետ :

Գեղածիծաղ Մալաֆյավում դաշտահանդես կա այդոր ,
Շտապում են դաշտը դեպի յերկսեռ խմբեր նորանոր :

Վրնչում են լիախրիսինջ նծույզները կենսառույգ ,
Հոտոսելով ամառնային առավոտը լիառունգ ,

Հպարտ , ասես , վոր կրում են իրենց վրա՝ քիկնավետ
Կտրիճներին , վորոնք մրցման պիտի յելնեն իրար հետ :

Քաղափից դուրս , դեպի դաշտը , ահա մի խումբ
այրուհի

Սլանում են քամուն տված բաշերն իրենց առյուծի :

Ու բոլորի հայացքները դարձած իսկաւ ղեպ փաղափ,
Հո՞ծ բազմութեան ծովով անցավ ուրախութեան մի
կռիակ...

Իսկ յերբ հասավ անմիջապէս այդ սրարշավ
այրուծին,
«Կեցցե՛ք իգիթ Մոկաց-Միրզեն» բոլորը մեկ՝
ձայնեցին:

Յե՛վ հայ ու փուրդ աշխատավոր հո՞ծ բազմութեանը
այդ մե՞ծ՝
Ամառնային ավանդական դաշտահանդեսն սկըսեց:

Յեղբայրական առատ սիրով լի յեր մե՞ծ սիրտը նրա,
Արտաստի՛ պէս, վոր չէր տեսնում չար բագեյին իր
վրա...

2

Շղթա կապած շողշողուն շուրջպարերը շարունակ
Դառնում են գերբ վետիկտուն ծիածաններ
յերփներանգ,

Դառնալով մերք հողմածուփ ալիքների խոլ պտույտ
Ու մերք մկուն հեգապար յեղեգների ծփանուտ:

Խշխշում են ծեփծեփուն նախշուն շորերը՝ քեթև
Պարադնելի յերկու սեռ բռնած ուրախ քևիքև:

Հովին տված քաշկինակն ու փուրդի քույս փռշին
Քաշում է պարը ահա գեղահասակ պարբաշին.

Ու շինական մարդու մեծ շունչը ամեն մի քառում՝
Նրանց առույգ, փոխնիփոխ յերգն ե գնգում

շուրջսարում :

— «Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ,
Գյուլի կռունկ երկեն վիզ.

Այսպե՛ր, այսպե՛ր, կարգա զիս,
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ.

Թյուջար մարդու մի՛ տար զիս,
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ.

Վոսկի համբի՛ մոռնա զիս,
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ.

Զուլիակ մարդու դու տուր զիս,
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ.

Մ՛հու՛ք գցի, պաչե զիս,
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ...

Յերգն ե գնգում կարկաչահոս աղբյուրի ջիմջ ջրի
պես,

Ու դառնում ե ծեփծեփելով մեղմածփիկ պարը հեզ,
Յերբ նոր յերգի ծայր ե տալիս մի փուրդ տղա

մրահոն,

Ու լայնածիր այդ շուրջսարում բռնկում ե

«Դերիկոն» :

— «Մեր տան առաջ արտ գարնեցան,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան.

Յերկու ջեյրան միջով անցան,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան.

Մեկն իմ յարն եր, մեկն ել քո յար,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան.

Ծամերը ծով, բաժը չինար,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան.

Դերիկոն դռան ավել կանի,

Ինձի քագուն աչքով կանի,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան:

Դերիկոն գուքան հաց կը տանի,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան,

Սերը քողած քա'ն կը տանի,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան,

Սերն ու կարագ գալում բեկին,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան,

Աստված առնի նրա հոգին,
Դերիկո հո'պնարո, Դերիկո ջան...

Պար եմ գալիս խառն քոնած տղա, աղջիկ միասին,
Ու զնգո՛ւմ ե հաջորդելով մեկ պարերգը մյուսին:

Ամեն մեկը սրտում ունի մի-մի անգիր տաղարան,
Ձայնակցում են նրանց յերգին ուրախ գունամ-
նաղարան:

Մինչդեռ անդին, հեծյալները, գծած մի լայն
ասպարեզ,
Կատարում են մտած մրցման՝ ձիարշավի գոռ
հանդես:

Խրխնչում են գեղազարդար նժույգները կատաղի,
Իրենց քամբին առած թիկնեղ յերիտասարդ,
պատանի:

Հողն եմ դոփում մեծասմբակ նրանք հազիվ
սանձահար,
Սպասելով խիստ անհամբեր՝ կետ-նշանին ազդարար:

Ու թռչո՛ւմ 'են արագընթաց բոլորը մեկ՝ միասին,
Հրաբորբոք լափաղ տենչով անցնելու մեկ-մյուսին:

Արևի տակ լուսաշողշող նրանց արշավը հրկեզ՝
Նմանում ե հանկարծ պոկված ասուպների լուսագես:

Միմչ բազմությունն ակամատես այդ հիաստանչ
հանդեսում՝

Քար ե կտրել շունչը պահած, դարձած համակ
սպասում:

Սլանում ե նրանց հետևող ամեն-մեկը առանձին,
Հեծած անսանձ ու սրաբշավ իր աչքերի արար ձին.

Վորպեսզի յերբ դառնա կտրին առաջինը հաղթական՝
Իր ջերմագին հիացմունքի ծաղկեփունջը տա նրան:

... Ո՞վ ե հերոսն այն հոյակապ՝ հետ ե դառնում
սրբնթաց,
Զերք հայելուն՝ ակնախտիդ մի մառադայք-
անդրադարձ.

Թողած հետև արշավասույր մրցակիցները ամեն՝
Մոկաց-Միրզեն հասավ ահա հեծած իր Բյոզ-
Բադավեն.

Առավ դափնին հաղթանակի — հիացմունքի անքիվ
վարդ,
Ու խրխնջա՛ց լիախցուն՝ ձին հեծյալովն իր՝
հպարտ:

4

Մինչ արեգակն որը կխած բեփվում եր դեպ
մայրամուտ,
Ու հրմվում եր աշխատավոր բազմությունը հայ ու
ֆուրդ,

Քաղաքի մեծ ճամնապարհով, դեպի դաշտը սրընթաց
Նետի նման արագ բռնող մի ձիավոր յերևաց,

Վորը ահա հասավ իսկույն—ինչպես հանկարծ իջնող
ցին,
Ու գարմացած բազմուրջան մեջ աշտանակեց իր սև
ձին:

Մի թիկնավետ յերիտասարդ, վոտփից-գլուխ
զինավառ,
Վորն իր մոայլ հոնքերի տակ ուներ գաղտնիք մի
խավար:

Մի կախարդիչ գավազանով պարերն իսկույն կանգ
առան,
Ձայնելը վողջ դադարեցին, լոեց զուռնա-նաղարան...

— Ճգիրեյից եմ գալիս յես, Միր-Մահմուդի յեմ
ծառան,
Մոկաց-Միրզի'ն տեսնել կուզեմ, նամակ ունեմ յես
նրան,—

Սանճահարած իր նժույգ ձին ասաց հեծյալն
անծանոթ-
Ժողովրդին, վոր կարծես թե ունկնդրում եր մի
չար բոթ:

Մի սլատանի նշանացույց արավ նրա ուզածին
Ու սուրհանդակն շտապ դեպի քաջը քշեց իրա ձին:

Յերբ տեղ հասավ, անմիջապես իր մծույգից բռավ
ցած,
հոնարհաբար գլուխ տվեց մինչև մեջքը կռացած.

Այա հայտնեց ով լինելը և իր ծոցից հանելով,
Մոկաց-Միրզին հանձնեց կնկված մի փակ ծրար իր
ձեռով:

Մոկաց-Միրզեն ծրարն առավ ու բանալով այն
խսկույն՝
կարդաց անձայն, վսր գրված էր ֆաղցր մեղրով
մեջը բույն:

Թույս հոնքերը կեռ ու կամար իրարու մերձ՝ թրի
պես
Ակոսեցին խորշումներով նրա ճակատն արևկեզ:

Հոգին նրա խաղաղ ինչպես ծիծաղածուի վաճա
ծով՝
Փոթորկահույզ լցվեց խավար և անմեկին
կասկածով...

Ամիրապետ Միր-Մահմուդից յեկել էր մի հրաման,
Շուտ ձգիրե պիտի յերթար Մոկաց-Միրզեն
անայայման:

5

Որը անցավ... Մռայլամած Առնոս սարի մերկ ուսին
Բացվեց կլոր, արնակալած վերքի նման մի լուսին.

Տեսա՛մ տխուր՝ եմ կտրիճի դռան առաջ կանգնած
հոծ
Մի բազմություն խռովահույզ ծովի նման ակեկոծ :

Յուրաքանչյուր սրտի վրա մի կառ-կարմիր վշտի
կայծ՝
Սողոսկում եր նրանց հագում չարագուշակ մի
կասկած :

Մեկնումի յեր սպասում մութ եմ սուրհանդակը
բանքեր,
Նստած իր սև ձիու վրա, վոր դոփում եր
անհամբեր...

«Մինչև լուսինն արեգակին գիշի յերկինքն
անսահման՝
Պիտի սարայ մտնեն նրանք արևի հետ
անպայման»...

Խրնիք մտավ Մոկաց-Միրզեն, սիրտը սիրով
մշտավառ,
Վոր հրածեշտ տա սիրասուն իր սիրունին վշտահար :

Տեսա՛մ նրան գլուխ դրած բարձի վրա սպիտակ՝
լա՛ց ե լինում դեմքը ծածկած ծամերի սև ամպի
տակ .

Նայե՛ց մի պահ վոթականը լուռ՝ եմ վերավոր
յեղնիկին,
Կսկիծի սև ամպը յելավ, ծածկեց պայծառ իր հոգին :

կրակն ընկած արտուտի պես սիրտը անգոր թայրտա՛ց,
Գերանն ասես մարմատելով կոտրվում եր, կախվում
ցա՛ծ...

Պլպլացող մրագն աղոտ սյունի վրա ծխակեր՝
Դառնում եր մի կարմիր հրդեհ ու յերդիկից ձգտում
վե՛ր...

Նայե՛ց, նայե՛ց խելակորույս, վշտամորմոք յեղնիկին,
Ապա վառվող կրակի պես սեղմեց նրան իր կրծքին:

Կրծքին սեղմած—հանց յերկիրը իր արևին
հուրհրան՝
Համբուրում եր հազար անգամ, քնքուշ ասում եր
նրան

— Մի՛ լաց լինի, իմ Ալ-հաթուն, մի՛ մորմոքի
աղեկեզ,
Սիրտըս վշտիդ սուր դանակով դու մի՛ անի յերկու
կես:

Մի՛ կտրտի սիրտդ իգուր, ի՛մ սիրելիս, մի՛ սգար,
Թող վոր գնամ, աչքերդ թաց չեմ թողնելու յես
յերկար:

Կերթամ այսոր, բայց վերըստին հետ կը դառնամ
յես շուտով,
Ու կը սեղմեմ քեզ իմ սրտին ավելի վա՛ն կարոտով:

Բաժանումը՝ անդավանան յերկու սիրող սրտերի,

Վորքան դժվար՝ հանդիպումը կրկին ֆաղթը է
ավելի...

Բայց Ալ-Խաթունն ասես նրան բուրբուլին չեր
լսում,
Ու աչքերիցն իր սևորակ առատ արցունք էր հոսում:

Փաթաթվել էր ֆաջի վզով, աղերսում էր՝ մի՛ գնա,
Սիրտըս կոտոր, աչքըս լալով ֆարին մի՛ տա, մի՛
գնա:

Քո խորոտիկ Ալ-Խաթունի թարթիչները մի՛ քրջի,
Բլբուլն յերբեք իր սիրասուն վարդից հեռու չի՛
բռչի:

Խեղճ յեղնիկ եմ քո շվափում, ծերունի հոր
մի՛նումար,
Կա՛ց, մի՛ գնա, մի՛ հավատա, աշխարհը նեմօ,
մարդը չա՛ր...

Դուրսն այդ պահին սուրհանդակի ձին վրնջաց
յերկու հեղ,
Բաժանումի ժամն էր ասես ազդարարում խելահեղ:

Ու վշտահար են վորսկանը լացող յեղնիկն իր գրկին՝
Կուրգուրում էր նրան անվերջ, խնդրում կրկի՛ն ու
կրկի՛ն.

— Թո՛ղ, Ալ-Խաթուն, քող վոր գնամ ու դու
դարձիս սպասիր,
Հետ կը դառնամ յես անվտանգ ու անունըս անբասիր.

Զե՛մ ուզում, վոր վախկոտ ասեն, Միր-Մահմուդից
վախեցավ,

Քաջի համար դրանից մեծ չկա՛ ամոք, չկա՛ ցավ :
Իսկ քեզ մինչև իմ վերադարձ՝ անպաշտպան չեմ
քողմի յես,
Քաջեր ունեմ, քեզ կը հսկեն իրենց աչքի լույսի
պես...

Դուրսը դարձյալ սուրիանդակի ձին անհամբեր
խրխնջա՛ց...

— Դե՛, Ալ-Խաթուն, մնաս բարով, տխուր կարիճն
այն ասաց.

Ասաց ու հուր հրաժեշտի համբույր տալով սիրածին
Դուրս սլացավ կայծակի պես, հեծավ քամաճ իրա
ձին :

Յեկան քաջի սրտում փույրեր—յերկու բռնուն
սպիտակ—

Ու յերկու կուժ ջուր ցանեցին նրա շուֆին լուսնի
տակ :

Ու հավաքված բազմությունը սրտակոտոր ու վրդով
ձամբա դրեց իր անվեհեր քաջին տխուր վաղջերբով :

Իջավ խավա՛ր, խոճոռ գիշեր—նակատագրի պես
մթին,

Ուր էյուսվում եր մի հանելուկ անլուծելի ու խրթին :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Արևն յելավ ալուլ-մալուլ մշուշ կապած են սարեն,
Յերկու հեծյալ համբորդները մտան ահա ճգիրեն:

Շնթոկել է արնամուրք վագրի նման կատաղի
Իր բազմաթիվ գահերի մեջ սարայր Միր-Մահմուդի:

Ու նրան մոտ անմիջապես, արյունըռուշտ մասրնկեր՝
Մինարեյի հաստաբազուկ աշտաբակը յերկնափեր,

Ծունկի յեկած կորափամակ խաժամուժում խուղերի՝
Վե՛ր բարձրացած սպառնական բռունցփի պես
վիթխարի:

Դուրս է թափվել ֆաղափը վողջ, լցված փողոց ու
տանիք:

Տեսնի Մոկաց մեծահամբավ տղամարդուն գեղեցիկ:

Փողոցներից՝ հետաքրքիր բազմությունով տոգորուն՝
Անցնում է նա, ճիու վրա, ինչպես կանաչ մի
գարուն:

Ժպիտների ֆանի՛ փունջ,
 Լալ, մարգարիտ, նագ անգին
 Շաղ ավեցին նրա շուրջ
 Կանայք սիրուն ու գանգին:

Քանի՛ աղջիկ ամոթխած
 Սիրակարոտ ու ծարավ
 Թրթռնացին զարնված
 Հանց լոր, արոս ու կաֆավ.

Բայց վորսկանն են ձիավոր
 Անտես քողեց ու գնաց,
 Սրտի վրա վիրավոր
 Թառած լոկ մի հա՛վք մնաց,—

Ալ-Խաթունը իր սևաչ,
 Մի ըսպիտակ աղավնի,
 Սիրտը ֆնֆուշ—վոսկի փարչ,
 Սերը—նռան հուր գինի...

Միր-Մահմուդի կանանոցի վարագույրները հանկարծ
 Բացվում են լուռ՝ մռայլ ու մութ ամպերի պես
 Բեղփրված:

Յեվ ամեն մի Բեղփից ահա մայում է հուր մի արև,

Մանգուլներին կտրինն այն սեգ յերբ բարձրանում է
վերև:

Սուր-սուր նետեր կեռ հոնքերի աղեղներիցը բռած՝
Հրդեհում են սիրակարոտ նագուֆ սրտերը կանանց:

Մորմոխում են կարոտավառ, տալիս հագա՛ր յերանի
են սիրունին բախտավորիկ՝ նբա սիրուն արժանի...

«Մեծահարուստ իր գանձերով և ակնունքով
բովանդակ,
Ամիրապետ Միր-Մահմուդը մի հրեշ է այլանդակ.

Նա մի տգեղ և անկրակ մոլորակ է լուսագուրկ,
Մոկաց-Միրզեն ճամանչագեղ մի արեգակ է
անգույց»...

Ու յերագուն՝ ամեն մեկը սիրո դոներն է թակում,
Թևը կտրած բռչունի պես գերի ընկած
վանդակում...

Յերբ շաչում է մտրակի պես հրամանը ներքինու.
— Փարդաները շուտ փաշեցե՛ք, փանջարեփցը
հեռո՛ւ...

4

Մինչ նայում եր հարեմը վողջ, վարագույրները
մեկդի՛

Մտավ հպարտ Մոկաց-Միրզեն ապարանք
Մահմուդի:

Տեսալ այնտեղ եմ սև սողուն կոլոտ-կոչին

անամոք,

Գալար յեկած ամիրապետ Միր-Մահմուդի քախտի
մոտ:

Նրա գլխում անմիջապես փայլատակեց մի կայծակ
ու նա տեսալ լույսով նրա ստոր դավը բացարձակ:

Ու շփոտակի մի սուր հայացք նիզակելով բեկի դին՝
Պատշան կարգով նա վողջունեց ամիրապետ
Մահմուդին:

Միր-Մահմուդը բարեն առալ ու սիրալիք ակնարկով
Հրավիրեց նրան նստել գորգի վրա, իրա բով:

Հոգին խալար ու սև գիշեր, աչքերում խանդ մի
խորին՝
Միր-Մահմուդը դարձալ շփեղ ու հոյակապ իր
հյուրին:

— Միրզա', — ասաց, — իմացել եմ, վոր արժանի
գովեստի՝
վորոյան ես ֆաջ և իմ յերկրում համբալ ունես
իգիթի:

Ամիրապետ Միր-Մահմուդին մեծ պատիվ ե ու
պարծանք.
վոր ֆեզ նման իգիթ ունի իր աշխարհում հպատակ:

Փաջի հարգը ֆաջը գիտե, ու կանչել եմ ֆեզ ահա',
վոր անվանի ֆաջին վայել պատվներ տամ և ընծա,

Վորպեսգի վողջ իմանան, թե ընծաներով մեծագին՝
Առատաձեռն յերկրի տերը գիտե պատվել իր
փաջին:—

Ասաց ժպտուն ամիրապետն ու ծափ տվեց յերկու
հեղ,
Մտան յերկու մանկավիհներ, բերին, յերկու սկուտեղ:

Մեկում կարմիր ոշարակով լեցուն չինի սուրահին
Ու մյուսում՝ վոսկեջրած յերեք փինջան թանգագին:

Վայր դնելով գորգի վրա, Միր-Մահմուդի
հանդիման՝
Հետ կանգնեցին խոնարհաբար լսելու նո՛ր հրաման:

Բայց նա նրանց նշան արավ դուրսն սպասել իր
կանչին:
— Ինձն ե այսոր ուզում անձամբ մատուցակել եմ
փաջին...

Ու սուրահին նրա ձեռքում գեղգեղելով մի յեղեղ՝
Թափեց արշունն իր կտուցից փինջաններում այ՛ն
յերեք:

— Ասա՛, վորսկան, յերբեկցե արդյո՞ք ես սուր
գնդակից
Թափել ե մի յեղնիկ այսպես արշուն կարմիր և
սևերիծ:

Իսկ անոքն այս, վոր հեղում է անուշ հեղուկն այս
ահա',
Ըստումբուլի մեծ սուլթանից ստացել եմ յես ընծա:

Վրան գրված կա յերկու տող մեր սրբագան
զուրանից,
Առ ու կարդա, կարդացվոր ես դու լավ, ինչպես,
հայտ է ինձ...

Միր-Մահմուդը ու բեկն իրար նայեցին խոր ու
անձայն,
Ու յերկու սև դաժան իժեր՝ իրար խկույն
հասկացան...

Ստորաբարձ դավն անամոք նրանց հոգում դառնակեզ
Գալարվում եր անապատի փնախնդիր ոճի պես:

Ու մինչ մռայլ Մոկաց-Միրզեն են սուրահին ձեռքն
առած
Գիրն եր կարդում ամիրապետ Միր-Մահմուդի ցույց
տված՝

Կոլու-Խոջի ձեռքը ահա յերկարեց սև վորպես ոճ
Յեվ աղեխարձ բույնը բախեց փինջանի մեջ
վռսկեզոծ:

— Անուշ անեմֆ, իգիք Միրզա, ու բող ընդմիշտ
անապատ՝

Շարբաթի պես ֆաղցըր լինի մեր յերկուսի սերը
վառ:—

Ասաց խարդալս Միր-Մահմուդը— արյունախում
բորենին,
Զարկելով իր փինջանը լիք Մոկաց-Միրզի
Փինջանին:

Ու խմեցի՛ն... ոչարակի յուրաքանչյուր շիթը կեզ
Մի կայծ դարձավ ֆաջի սրտում, այրեց իսկույն
աղեկեզ:

— Այդ ի՞նչ հուր է արագորեն անում այդպես...
մի՞թե, բո՞ւյն...
Շուրջը մի պահ մշո՛ւշ, մշո՛ւշ ու կապարե
լուքյուն...

Քայց խզում է լուռքյունն այդ՝ ամիրապետը մի ին
Յերկու վառվող ածուխի պես աչքերն հառած
իգիթին.

— «Այն գլուխը, վոր չի՛ ծոռում քո զորավոր բրի
տակ,
Կտրի՛ր իսկույն և արյունը խմիր իբրև ոչարակ»—

Մեծ մարգարե Մուհամմեդի պատգամը դո՛ւ
կարդացիր,
Խոսի՛ր, իգիթ, համաճա՞յն ես խոսքերի հետ այդ
ընտիր:

Լուռ եր սակայն Մոկաց-Միրզեն— ընկած անել
թակարդու՛մ
Մի սինլֆոր դահին նրա մահավնիռն եր կարդում...

— Բայց դու լո՛ւռ ես,—դիմեց դարձյալ ամիրապետը
նրան,

Թե՞ իմաստուն մարգարեյի այդ պատգամին չես
հավան:

— Ամիրապետ, առյուծը սեգ անտառումն է
մոկչում:

Վորի ձայնից գագանները սարսափահար են
փախչում:

Մոկաց-Միրզեն քաջ է իրոք, և իգի՛թ է իսկապես,
Առյու՛ծ է նա և վոչ խարդախ ու խորամանկ մի
աղվես:

Մի՛ պարծենա, քե՛ վորսացիր Մոկաց իգի՛թ
վորսկանին,
Թեպէտ առյու՛ծ վորսացիր դու, բայց վորսկան չե՛ս
տակավին.

Նա՛ յե վորսկան, ով չի լարում քակարդ յերբեք
վատաբար,
Ուսրընթաց վազֆի ատեն կանի վորսին նետահար...

Պատասխանեց Մոկաց-Միրզեն, մինչդեռ այրող մի
կրակ
Տարածվում էր նրա մարմնում, հոսում յերա՛կ առ
յերակ:

Թռչնո՛ւմ էյին հետզհետե գույգ վարդերը այտերի,
Թափվում նրա գրչանկար հոմքերի գեղն անքերի:

Տեսնում եմ նա մութով պատած աչքերի դեմ—հանց
յերագ,
Հովիտները ծաղկածիծաղ ու լեռները յերկնահաս.

Յեղնիկների վագֆը խմբով, արծիվների ազատ չուն,
Աղբյուրները գով ու գուլալ, ջրերը ջինջ,
կարկաչուն,

Տեսնում եմ նա իր սիրելի ժողովրդին կարոտով,
Վոր չարաչար հաց ե դատում իր ֆակատի
քրտինքով.

Յե՛վ մի խրնիք, վորի շեմֆին նստած մի կին
վշտահար,
Գիշեր-ցերեկ արտասվակոծ լաց ե լինում իր
համար...

Մթնե՛ց հանկարծ... քվաց նրան կայծակ ֆայթեց
այդ պահին,
Պտույտ յեկավ սարայը վողջ ու Միր-Մահմուդն իր
գահին:

Պար բռնեցին իրերն ամեն, խառնըվեցին իրարու,
կանգնեց նրա դեմ—հանդիման մահը—դեղին մի
ուրու:

Նա վայր ընկավ գետնատարած, աչքը հառած իր
մահին,
Միր-Մահմուդի ձեռքիցն ընկավ ու փշրվեց
սուրահին:

Ու ֆրբըջա՛ց Կոլոտ-Խոջեն— վայրենաբույս մի
մացառ,
Յերբ տապալվեց Մոկաց-Միրգեն— կայծակնահար
կաղնի ծառ:

Լսե՛ց կտրինը մերձիմահ այդ ֆրֆիջը վայրենի,
Վոր այրող եր թույնը փան թե դժվար՝ մահից
ալելի:

— Սողո՛ւն, դո՞ւ յես չարախնդաց հաղթողի այես
ֆրբըջում.
Առյուծը փաջ առյուծ ե դեռ, բեկուզ վերջի՛ն իր
շնչում...

Մոնչաց նա, ու դաշույնը վերջին ուժով շարտված՝
Ուղիղ բեկի սրտին նշան՝ մինչև դաստակը գնա՛ց:

— Ամիրապե՛տ, վոնիրներըդ չե՛ն ներվելու նաև
քեզ.
Ու քո փառքն ել կանցնի մի որ անհետ մոռալի ամպի
պես:

Արդարությունը պալատում կալանավոր հավիտյան,
Ու չի՞ ծաղկում վոչ մի ծաղիկ անապատում
բոնության...

... Ու դալկահար շրթունքները չբացվեցին
վերքստին,
Հանգա՛վ իսպառ չար աշխարհի արյունոտ սուրբ
սրտին:



Անմիջապես քուսով արագ բոքը— մի սև ձիավոր,
Ամենուրեք արձագանքեց տխուր լուրը քեւավոր.

Մոկաց-Միրզի աստղը հանգավ Միր-Մահմուդի
նշալատում,
Սուգ է իջել Մոկաց յերկրին, սուգն է անչափ,
անպատում.

— Դավ է լարել փաջի հանդեպ Կոլոտ-խոջեն
դավաճան,
Տվել նրան սև բանասրկուն քույնով խառնած մի
ֆինջան...

ՎԵՏՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Յեկան Մոկաց կտրինները, յեկան հասան ճգիրեն,
Յեկան մտան են մարդակեր գազանի քյոշկ ու
սարեն :

Խնդիրք արին ամիրապետ գոռոզ են Միր-
Մահմուդին,
Իրենց հանձնել իր սպանած գյոզալ Մոկաց-Միրզի
դին :

— Տանե՛ն,— ասաց, սլան իրենց ֆաջին՝ բոլոր-
բովանդակ,
Վոր ել չանեն ամիրապետ Միր-Մահմուդի դեմ
կատակ...

Ու անքառամ ծաղիկներով, պսակներով
գարդարուն՝
Դուրս հանեցին ամարաքից խորշակահար մի
գարուն :

Ամեն աչքից արտասուքի առատ աղբյուր եր
հոսում,
Ամեն բերան սարսափելի դավի մասին եր խոսում:

Քայլում եյին դիակակիր, սրտերի մեջ խոր կսկիծ,
Բյոզ-Բադավենն ել իրենց հետ, մեռած տիրոջ
հետևից:

Մալաֆյավի դաշտի վրա թափոքն մի պահ կանգ
առավ,
Հավաքվեցին սևեր հագած լալկան կիները պառավ:

Հագար սրտեր փշրվեցին՝ ֆարին զարկած կժի պես,
Հագար-հագար վրա ընկան քեռ կոտրած դշի պես:

Գետնից առան բուռ-բուռ փոշի, ծամերն իրենց
հողեցին,
Ծաղկունքը վողջ արցունքի յափ կաթիլներով
ցոլեցի՛ն...

2

—Մեր աննման Մոկաց-Միրզեն
կուլտ-հոջի բույնո՛վ գնաց...
Մոկաց-Միրզի Բյոզ-Բադավին
Զիու թամբը դատարկ մնաց:

Մոկաց-Միրզեն փառ ու պայծառ,
Մեր պատ-կտրին Մոկաց-Միրզեն,
Կանաչարև չինարի ծառ,
Հագա՛ր ափսոս Մոկաց-Միրզեն:

Մոկաց-Միրզեն — սարի վորսկան,
վորսկանը վորս՝ ո՞վ եր տեսել,
Մոկաց սլայծառ աստղը հանգավ,
Հագա՛ր ափսոս Մոկաց-Միրզեն:

Ալ-Խաթունին կանչեցե՛ք գա,
Հագնի հինը, հանի թագեն,
Խեղնին ծիծաղ ու բախտ չկա,—
Հագա՛ր ափսոս Մոկաց-Միրզեն:

Մոկաց յերկրի հավերբը թող
Ձեն-ձենի տան ու տաղ ասեն,
Ձկա բլբուլը հագարան,—
Հագա՛ր ափսոս Մոկաց-Միրզեն...

Մրմուռ լացին Մոկաց յերկրի աշխատավոր
գյուղացի՛ք,
Լացին, ասին «հագա՛ր ափսոս Մոկաց-Միրզեն
գեղեցիկ»...

Յե՛վ առնելով իրենց ուսին անշունչ դիակն իգիթի,
Քաղաք տարան և իջեցրին դռան առաջ անբախտի:

Խելակորույս հասան յերկու ֆույրերը հե՛գ
վողբագին.
Գիշերվա պես ծամերն իրենց իջան յեղբոր դիակին:

Զարնին իրենց ալուլ-մալուլ սրտի բոլոր լարերին,
Յեղերգեցին արտասովակո՛ծ, աղեկըտուր սուգ
արին:—

Մեծ սարի ճամբի փռչին,
 Քույրիկ ջան, են ո՞վ կուգա,
 Մեռնեմ իր չինար բաժին,
 Ախպերս ե, ավով կուգա.
 Ախ չե', չե', մալուկել ե,
 Սիրտը խո՛ր ցավով կուգա:

Մեր բարձրիկ սարերն յեկեք,
 Մոկացի վա՛րդ աղջրկունք,
 Կափի պես մանրիկ քեկեք,
 Քաղեցեք գույն-գույն ծաղկունք,
 Վերքերին մահլամ շինեք,
 Բաց անի նախշուն աչքունք:

Հանեցեք Ալ-հաթունին,
 Յելնի սուգ անի վրան,
 Զարթնեցրեք են սիրունին,
 Արտասուք ցանի վրան,
 Աչքերի յերկու լնից
 Զույգ աղբյուր հանի վրան...

— Հեռո՛ւ կացեք, ախպեր ու քուր,
 Ես ի՞նչ սուգ ու շիվան ե,
 Աչքերը փակ, սիրտը մրմուռ՝
 Ես ի՞նչ ջահել-ջիվան ե.
 Փո՛ւլ գա եսպես աշխարհը թող,
 Բեկի դատ ու դիվա՛ն ե:

Ծիծաղ ծով-ծով աչքերըդ փակ,
Մոկաց-Միրգա, բա՛ց արա,
Շրքունգներըդ ծարավ, պապակ՝
Անո՛ւշ յար ջան, բա՛ց արա,
Սիրտըդ երված, սիրո փափագ՝
Իմ սիրու դեմ բա՛ց արա:

Ի՞նչ ե՛ք կանգնել շուրջ-բոլորուն,
Մոկաց իգիթ, քա՛ջ տղեք,
Զեր պատվական ախպոր սիրուն՝
Զիանք հեծեք ու բռնեք,
Ու բրինդար Մոկաց-Միրգին
Անմահական ջո՛ւր բերեք,

Մի՛ բողնեք, վոր քառամի,
Ալ ու ալվա՛ն ե,
Վե՛ր հանեք մահու ֆնից,
Զահել-ջիվա՛ն ե...

5

— Դու մենակ կուգաս,
Ա՛յ Բյոզ-Բադավեն,
Զկա՛ մեր Մոկաց
Հուլսն ու ապավեն:

Սրտիկդ մալուլ,
Աչքըդ պղտոր ե,
Կուլաս դու գուլ-գուլ,
Քո վիշտը խո՛ր ե:

Ձեռքը կտրինի
Ել չի՛ սանձի քեզ,
Սաքեր չի՛ քոչի
Յոլուն աստղի պես:

Յերկիրը ավեր,
Մեր գիրը սև է,
Բեկը մարդակեր,
Ամիրան դև է:

Մեր սշխարհը մեզ՝
Սուգն անպակաս է,
Քանի մելիք-քեկ՝
Մեր որը ա՛յս է...

6

— ձգիրեյից յեկավ մի սև ձիավոր,
Թղթիկ բերեց Միր-Մահմուդից բռնավոր,
Առին տարան Մոկաց-Միրզին փառավոր,
Արո՛ւն կաթեց մեր սրտերից վիրավոր.
Բլբուլը քոռ՝վ գնաց,
Վարդընոց մալո՛ւլ մնաց:

Մոկաց յերկիր բուր՝ ֆար ու ֆարափ է,
Յերկինքը կա, ա՛յս, ի՞նչ անեմ, վոր ամպ է,
Յերկնփի պես մեր սիրտը ամպ ու գամպ է,
Կարկըտախառն վարար անձրև կը քափե,
Խոտոր է խեղճի ճամբեն,
Կոտո՛ր է սրտի շուշեն...

Յերեք գիշեր ու յերեք որ դառնակսկիծ սգացին,
Սուգ եր մտել քաղաքը վողջ, սև եր հագել
մոկացին:

Առնու սարը մշուշի մեջ, Յեղերովը միգապատ՝
Սև ամպերով ծածկել եյին իրենց ճակատը հպարտ:

Ու յերեք որ, յերեք գիշեր քոն եր իջնում
յերկնքից,
Ու յերեք որ, յերեք գիշեր լաց եր, շիվան ու կսկիծ:

Յերեք որը յերբ բոլորեց, բազմությունը վողբագին
Յելալ բարձրը բլրի գագաթ, վոր մոտ լինի
ատողերին.

Այնտեղ կապույտ վրանի տակ բացին մի խոր
գերեզման
Ու վշտակոծ՝ հողը դրին Մոկաց-Միրզին աննման:

Վնիտ առուն եր խոխոջում, ծաղկում կակաչ ու
սուսուն,
Հովն եր այնտեղ ֆնֆուշ-անուշ ծաղիկների հետ
խոսում:

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Ամեն գիշեր հյուղերում, հաղթող ֆնին լուռ գերի,
Յերբ նրագներն են հանգչում նման փակվող աչքերի,

Գիշերվա պես սևագգեստ, այրող կրակը սրտում՝
Այդ բլուրն է բարձրանում մի կարեվեր կին
տրտում.

Նստում մալուլ-մեմալոր շիրմաֆարին վողբազին
Ու քաց անում աստղերին վշտամորմոֆ իր հոգին:

Վողբում է իր սերը— վարդ՝ անժամանակ
Թառամած.
Վորի նախշուն հավքը շուտ թռա՛վ խոով ու
գնա՛ց...

2

— Վե՛ր կաց, ի՛մ անգին,
Հերիֆ է ֆնես,

Աւ-խաթունդ կրկին
Յեկել ե քեզ տես:

Բլուր ու բարձունք
Անցել քարքարոտ,
Աչքը լի արցունք,
Սրտիկը կարոտ:

Լուսընկա ու գով
Ամառվա գիշեր
Հազար մուրազով
Խնձո՛ր ե ճախշել:

Խնձորներն այդ իր՝
Բերել քեզ նվեր,
Քնիցըդ զարթի՛ր,
Յար ջան, վեր կաց, վե՛ր:

Աչքըդ բաց արա
Թուխ քերքերունքով,
Խռով մի՛ կենա,
Նստեմք իրար քով:

Ջուր եմ բերել սառ
Աղբյուրից վնիտ,
Ա՛ն, Մոկաց-Միրզա,
Անմա՛ն իգիթ:

Խմի՛ր, կո՛ւշտ խմիր,
Սիրտըդ հովանա,

Սիրտըդ իմ սիրուն
Ծախավ չը մնա՛...



Արև ունեյի,
Արևըս ո՞ւր ե,
Սև սարի մթին
Ամպը լի ջո՛ւր ե:

Ալ-վարդ, մի՛ բացվի,
Բացվելըդ գուր ե,
Սիրահար խոսնակ
Բլբուլըդ ո՞ւր ե:

Շրթունքըդ ծախավ,
Սրտիկըդ հուր ե,
Ա՛ռ, անուշ արա,
Աղբյուրի ջուր ե:

Ա՛խ, սրտիդ զարկած
Թշնամու սուր ե,
Դու խոր ես ֆնած,
Խնդիրըս գո՛ւր ե...



Յեղերովա սարը մշո՛ւշ,
Յերկնփի ծովը վրան,
Մոկաց-Մի՛րգեն փնել մուշ-մո՛ւշ
Սիրածի հովը վրան:

Գարնանային գեղածիծաղ առավոտ եր հմայուն,
Ամեն կողմից հավերի տաղ, գառների կանչ ու
մայուն:

Ապրիլը ժիր ու չար ուլիկ, բռնածների զնգոցով
Թռչկոտում եր դաշտ ու հովիտ— ծաղիկների
ծփուն ծով:

Թերևս ու գով, անուշաբույր հովն եր քեում
Ֆմահան,
Իջնում եր դաշտ, յեկում բուր, քոչում ծաղկուն
սարալանջ:

Ապրշումն գառ ու զարբար նախշուն շորերը հագած
Կանգնել եյին հագարամյա չֆնաղ լեռները Մոկաց:

Դեպ այդ լեռներն եյին փշում հովիվները մոկացի
Բլուկների գուլալ տաղով՝ հոտերն իրենց քավարծի:

Ծիծաղում եր կապույտ ծովից սիրուն արփին
հոգեթով,
Լի՛ յեր կրկին բնությունը մի դյուրական հեֆիաթով:

Ալ-հաթունի հովիվ հայրը, սրտի վրա մի վառ
կայծ,

Քաշում եր իր հոտը հանդարտ դեպ այն բուրը
ծաղկած,

Ուր քնում եր վաղամեռիկ Մոկաց-Միրզեն մեռ-
մենակ,
Թողած այրի Ալ-հաքունի աչքը լալով շարունակ:

Արածելով դալար խոտը, վաղորդյան ցողը վրան,
վետվետում եր բլրալանջին արծող հոտը նրա,

Յերբ նշմարեց հովիվը ծեր՝ շիրմի վրա այն միակ
Ընկած ահա յերեսնիվայր ջահել կնոջ մի դիակ:

4

— Վո՛ւյ, կուրանա՛ն աչքերըս թող,
Անգութ աղջիկ, Ալ-հաքո՛ւն,
Իմ ոջախի կրակն ու շող,
Խավար կյանքիս փայլատո՛ւն:

Ինչո՞ւ այդպես սև արեցիր,
Արևը քո, սևավո՛ր,
Ինչո՞ւ մոխիր դու ցանեցիր
Քո հոր գլխին ավելոր:

Իմ մեկ հատիկ մար ու մրազ,
Իմ աչքերի միակ լույս,
Ինչո՞ւ, ինչո՞ւ թողիր մենակ
Խեղճ ու անմար ծերունուս:

Ի՛մ խրնիթի ուրախությո՛ւն,
Իմ բլուլի գուլալ տող,
Վո՛րսեղ գտնեմ քեզ, Ալ-հաքո՛ւն,
Քո անունի՛ն յես մատաղ...

Գրկած անշունչ մարմինը սառ
իր մեկ հատիկ աղջրկա՝
Մըմնջում եր ծերը քշվառ.
— Ալ-հաթունը ել չկա՛...

5

Անբախտ հայրը Մոկաց-Միրզի գերեզմանին
առբներ
Մի փռս փորեց. քաղեց այնտեղ աղջրկան հետ
սիրտը ծեր.

Ու ման յեկած իր սարերից ֆաղեց լալա ու սուսուն
Ու ծաղկունքով գարդարեց գույգ շիրիմները
սիրասուն:

Բացեց ջրի բարակ ճամբա շիրիմների այդ կողքով,
վորոնք յերկու վերքի նման բացվում էին իրար
քով.

Ու ջրափին անկեց լացող ուռենիներ սգավոր,
վոր հով անեն ֆնած յերկու սիրունների սևավոր:

Այնուհետև հաճախ տխուր ծեր հովիվը կարեկեր՝
Հանում եր իր հոտը դանդաղ այդ ծաղկավետ դարն
ի վեր,

Յեվ մինչ հանգիստ հոտը նրա բլրի վրա տարածուն,
Ախորժակով ցողաշաղախ քարմ արոտն եր
արածում,

Ծեր հովիվը իր ձեռնասուն ուռիների տակ նստած
Յեղերգում եր իր սրինգով՝ սրտակոտոր, աչքը
բա՛ց...

6

—Մոկաց յերկիր, սիրուն յերկիր,
Թագավորի թուրը վրան,
Հագա՛ր ամսոս ծաղկանց յերկիր,
Տեր են անգուր բեկ, ամիրան:

Կյանքը գանգին-գորավորին,
Խեղճի պահած գառը նրան,
Յերկրի բարին բռնավորին,
Կենաց կանաչ ծառը նրա՛ն:

Կալում շեղջած ցորեն, գարին,—
Հարկահանի կապը վրան,
Մեզ համար չե առատ տարին,
Զվալն ու պարկ, չափը նրան:

Ժողովուրդը անեղան լար,
Զալում-գոռա չափը վրան,
Կաթնադրյուրը բեկի համար,
Պղտորը մեզ, ակը նրա՛ն:

Հովիվը խեղճ լավն ի՞նչ անի,
Նրա սիրուն գառը գիլին,
Վռսկե ձուկը արնե ծովի՝
Ագահ-անկուշտ ձկնկուլին:

Ինչքան կուգի ծաղիկ ծաղկի,
Սիրուն բացված վարդը նրան,
Ամիրայի ու մելիփի,
Բեկի անգուք քաթը վրան:

Վարդը նրա՛ն, զարդը նրա՛ն,
Դալար-արուտ արտը նրա՛ն,
Արցունքը մեզ, մրմուռը մեզ,
Եսպես աշխարհ մնար վերա՛ն...

Յերգում եր հեզ հայրը մուր,
Զայնն եր ծերի կերկերում,
Մոկաց յերկրի վիշտը բոլոր
Նրա տխո՛ւր յերգերում:

ՎԵՐՋԵՐԳ

Ամպից մաղ-մաղ թոն է կաթում
Լալիս են հով ու յերկինք,
Մոկաց-Միրզեն և Ալ-Խաթուն
Քուն են մտել իրար գիրկ:

Նրանց վրա քնած մուշ-մո՛ւշ,
Սաղարթ-ախիտ հովանի՝
Որորվում են քնուշ-անուշ
Յերկու լացող ուռենի:

Ուռիներին այդ առնթեր,
Զար աշխարհին զոհ տրված
Ընկած է լո՛ւտ, վաղուց անտեր
Մի հին սրինգ կոտորված:

ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՒԿԱՅ-ՄԻՐԱՍ—Միբղա՝ հարդանքի տիտղոս է, նշանակում
է դրադետ: Հերոսի բուն անունը Ժող. բանահայտաբայան մեջ
անհայտ է:

ԲՈՒՈԶ—բրդից պատրաստված կոնաճև դլխարկ:

ԱՌՆՈՍ, ԿՈՌՈՇԱՊԱՀ, ԱՎԱՆՈՐԻԿ, ՌԸՄՈՒԸՄԵՆ, ՅԵՂԵՐՈՎ,

ԲԱՐՎԱՐ—լեռներ ու լեռնաշղթաներ են, վերոնք յեղերում
են Մոկսի յոթ զեղեցիկ հովիտները: Դրանցից Առնոսը ամենագե-
ղեցիկ ու ծաղկավետ լեռն է, վերի մասին հայ ու քուրդ Ժո-
ղովուրդն ունին բանահայտական զեղեցիկ տաղեր:

ԿՈՒՍ-ԽՈՁԱ—Մոկս քաղաքի հարուստ ու բնակալ բեկը:
Կարոտ նշանակում է կարճահասակ, Խոջա—հարուստ:

ՄԻՐ-ՄԱՀՄՈՒԴ—ամիրապետ, վերն ապրած է կարծվում
XVII-XVIII դարերում: Միր-նշանակում է՝ քաջ, հերոս:

ՓՈՇԻ—նուրբ դործվածք, վեր ծառայում է քուրդի շուրջի
երբ վաթթոց-ապարոչ:

ՇԱԼ-ՇԱՊԻԿ—տեղական դործվածք, բրդյա շապիկ:

ՀԱՐ—մեջք կապելու շալ, մետաքսից կամ բրդից դործված:

ԶՈՒՌ-ԲՅԱԶԱԽԻԿ—սյծեհնակաճի հյուսվածքով կարճ բաճ-
կոն, առանց թևերի:

ՇԱԼՎԱՐ—տեղական դործվածք, լայն անդրալարտիկ, նախ-
շուն յերկնեքով:

ԸՌԸՇԻԿ—կանեփից շինված ամուր, դիմացկուն վռտնաման:

ԹՂԹԻԿ ԸՄ—մի նամակ, դրուբյուն:

ՊԱՏՐՈՆՏԱՇ—փամփշտակալ:

ԲԱՆԴԻ-ՄԱՀՈՒ—գետի անուն:

ԸՌԵՍ—տանուտեր, դյուղապետ:

ՍՈՒՍՈՒՆ—ծաղիկ է, նաև՝ զեղեցիկ:

ԲՈՅԸ ԹՈՍՈՒՆ—գեղահասակ, պարթև:

ՀԱՃ—տղա:

ԲՅՈՁ-ԲԱԴԱՎԵՆ—Մոկաց-Միրզի ձիու անունը:

ՊԱՏ-ԿՏՐԻՃ—Վասպուրականի հայերի վրձ հ—քաջ, կտրիճ,
ջահել:

ԱՎ—վորս:

ՋՀԵԶ—ոժիտ:

ՍՈՒՐԱՀԻ—սրվակ:

ՁԱՆՖԱՍ—մետաքսյա գործվածք:

ԾԱՓԱՆՑ—դյուղի անուն է:

ՖԻՆՁԱՆ—բմականակ:

ՃՈՂ—ՃՈՂ—ճյուղ-ճյուղ, ծամերի գիսակներ:

ՁՂՁՂՈՒՆ—ղուլալ, վճիտ:

ԽՈՐՈՏ—սիրուն, դեղեցիկ:

ԱՐՈՍ—ծովային սպիտակ թռչուն:

ՁԱՎԱՀԻՐ—դանձ, ակնեղեն:

ՄԵԶԱՐ, ԴԱՍՏԱՆՈՒՆ—կապոց, բոխչա, վոր գործ էյին ա-
ծում բանջար քաղելիս:

ՍՈՒՍՈՒՆ—ՍՄԲՈՒՆ—ծաղիկներ են:

ՊՈՂ, ՍԻՎՏԿՈՒՆ—բանջարեղենի անուններ են:

ՀԵՎԱՐ—յերեկո, մայրամուտ:

ՁԱՆԳԻՆ—հարուստ:

ԵՐԵՐՈՒՆ—յերերուն, մուր, չվար, տխուր:

ՆԵՃԻՐՎԱՆ—վորսորդ:

ԿԼԱԹ—խնձորի անուն է (աշնանահաս). Վասպուրականում
օռվորություն կար, դեռ կիսահաս խնձորի վրա փակցնում էյին
դանաղան նախշուն տերև ունեցող բույսեր, խնձորը հասուն-
նալուց հետ քաց տեղերը կարմրում էյին, իսկ փակ տեղերը
մեռւմ սպիտակ: Այդպիսի խնձորները տրվում կամ ուղարկվում
էյին բարեկամներին կամ սիրելիներին իբրև ընծա:

ԿԱՐՈՍ—բանջարաբույս է:

ԱՆԵՂ—դղրարի գող դործիքը:

ՏՈՒՐԿԱ-ԳԵԱՒԻ—Մոկսի լեռնահովիտներէց ե, ուր ձմեռ-
նէրը սաստիկ բուք ե լինում:

ՍԵՅԻՍ—ձիապան:

ԽՈՂԱՄ—Ծառա, թիկնապահ:

ՃԶԻՐԵ—ամիրայանիստ քաղաք, վորը գտնվում ե Սղերդի
հարավակողմը:

ՖԵՐՄԱՆ—ղրավոր հրաման, հրովարտակ:

ՍԱԼԱՄ—վողջուն:

ՄԱԼԱՔԱՎԱ—ընդարձակ դաշտի անուն ե: Մոկսում հնա-
վանդ սովորութիւնն կար՝ այդ դաշտում հալաքվում եր հայ
և քուրդ աշխատավորութիւնը և հանդեսներ—սպրեր, ձիարշավ
սարքում:

ՊԱՐԲԱՇԻ—սպարազուխ, սպան իր հետեից քաջող:

ԴՅՈՂ—լիճ:

ԿԱՐԳԱ—պսակիր, ամուսնացրու:

ԹՅՈՒՋԱՐ—վաճառական:

ԴԵՐԻԿՈ—սպրերդի անուն ե:

ԲԱԺ—հասակ:

ԱԼՈՒԼ—ՄԱԼՈՒԼ—տխուր-տրտում:

ՓԱՐԴԱ—վարադույր (լուսամուտներէ):

ՓԱՆՋԱՐԱ—լուսամուտ:

ՔՅՈՇԿ ՈՒ ՍԱՐԱ—սալատ, սպարանք, գոյակ:

ՄԱՀԼԱՄ—սպեղանի:

ԲՐԻՆԴԱՐ—վերավոր:

ԿԱՊ—հարկահանի կապը—կալում չեղջած հացահատիկը նշա-
նում եյին հարկահանները—տաճով, նրանից Տ-ըղը վերցնելու հա-
մար, վորպէս հարկ:

ԶՈՌԲԱ—մեծ, հուժկու:

ԶԱՔ—ղզրարի այն գործիքը, վորով զարկում են անեղի
լարին՝ բուրդ կամ բամբակ գլեղու համար:

Պատ. խմբագիր՝ Ս. Կիրակոսյան

Տեխ. խմբագիր և ղեղարվեստական ձևավորող՝ Ստ. Ալքուբյան

Սրբադրե՝ Մ. Մարտիրոսյան

Կոնտրոլ-սրբադրե՝ Յե. Տ.-Մինասյան

Գլավիտի լիազոր. վ.—2027. Հրատ. 4874.

Պատվեր 336. Տիրած 3000

Թուղթ 72×105 . Տպագր. 3 մամ.

Մեկ մամ. 51,200 նշան. Հեղինակ. 3,36 մամ.

Հանձնված և արտադրության 5 IV 1939 թ.

Ստորագրված և տպագրության համար 25 V 1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040948

5540

